

619

Հ-20

ное приложение журналу „Гюхатитесс“

„Գիւլգուստետի“ Գրապարսան № 6

С. Амалянъ. „Инфекціонныя болѣзни домашнихъ животныхъ“



ԸՆԾԱՆԻ ԿԵՆԳՆԵՆՆԵՐԻ

ՎԱՐՍԿԻԶ

ՀԻԻԱՆԴՈՒԹԻԻՆՆԵՐԸ:

(Անասնապահական մեռարկ)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Նադեժդա» Տեատրալնի փող. № 7.

1 9 1 3

31 MAY 2013

8558

19
20
4-2

610
118-20

30 JUL 2008

Бесплатное приложение журналу „Гюхантестъ“

„Գրականություն“, Գրողարան № 6

Ս. ԱՄԱԼԵԱՆԻ. „Ինֆեկցիոնայի բուժանքային ճանաչումը կենդանիների մոտ“

Ս. ԱՄԱԼԵԱՆԻ

ԲՆՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԵՐԻ

ՎԱՐՈՎԻՉԻ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Զեւոարկ տեսանագրով)

10201

Հ.Ս.Ս.Ս. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Ս.Ս. Սուբլիկայնա Բիբլիոթեկա
7/31 1922
ՊՈՒԼՆԱ, ՊԵՏՐՈՎԻՍԻՆԻ
Ս. ԱՄԱԼԵԱՆԻ ԱՆՎԱՆ

Ք Ի Յ Լ Ի Ս
Տպարան «Նորից» Տեղագրային փող. № 7.
1913

շուկան համարեա ոչինչ չունի այդ կարևոր ճիւղից հայ գիւղական գործչի ձեռքը տալու: Մինչդեռ գիւղատնտեսութեան այլ ճիւղերը, շնորհիւ մասնագիտական թերթերի («Աշխատանք» «Նոր-աշխատանք» «Գիւղատնտես») շուրջը հաւաքւած մի խումբ եռանդուն և ջանասէր մասնագէտների, կարճ ժամանակէս ընթացքում ստեղծեցին քիչ-շատ հարուստ գրականութիւն, բայց անասնապահութիւնը և, գլխաւորապէս, անասնաբուժութիւնը համարեա տեղ չունեցաւ մեր նորարոյրը՝ գիւղատնտեսական գրականութեան մէջ: Այդ ցաւալի, անհուն ցաւալի երեոյթը, որի աւաջին և գլխաւոր պատճառը, անշուշտ, հայ մասնագէտների բացակայութիւնը պէտք է համարել, անկասկած մի մեծ բաց է. մի խոշոր միտուս հայկական գիւղատնտեսութեան համար:

Կովկասի համար ահագին արդէնաբերական և տնտեսական նշանակութիւն ունեցող շերամապահութեան, մեղուաբուծութեան, հողագործութեան և բամբակագործութեան կողքին պատուաւոր տեղ է բռնում անասնապահութիւնը իւր բոլոր ճիւղերով, և այդ այդպէս լինելով, պէտք է ջանանք օր առաջ փուկել այդ խոշոր բացը:

Մանաւանդ մեծ և նշանակալից դեր պէտք է խաղայ այդ գործի մէջ անասնաբուժութիւնը և անասնապահական առողջապահութիւնը. և այդ շնորհիւ այն ցաւալի, սակայն անուրանալի հանգամանքի, որ մեր գիւղացիութեան ահագին մասը դեռ ևս կասկածով է վերաբերում դէպի անասունների կանոնաւոր, դիտական բժշկութիւնը և յաճախ բաւականանում է այլ և այլ սնտոսի հաւատալիքներով ու պապենական մէթոդներով: Ահա այստեղ հայ գիւղական գործչի համար բացւում է գործունէութեան լայն ասպարէզ:

Չպէտք է մոռանալ և այն նշանակալից հանգամանքը, որ անասնաբուժական գործը դեռ նոր-նոր կանոնաւոր հիմքերի վրայ է դրւում. անասնաբուժական օգնութեան գործի արդի կացութիւնը Ռուսաստանի բազմաթիւ նահանգներում և մանաւանդ ծայրագաւառներում անչափ հեռու է բաւարար լինելուց. կան գիւղեր ու անգամ ահագին շրջաններ, ուր տարին հազիւ մի-երկու անգամ ոտք է կոխում գաւառական անասնաբոյժը:

Այս բոլորը աշխուրջ ուշադրութեամբ ի նկատի առնելով, տեսնում ենք, որ հայ գիւղացու ճշմարիտ բարեկամները ունին

կատարելու մի մեծ և բազմարդիւն գործ, որի կարևորութիւնը և անհրաժեշտութիւնը պարզեցի վերև: Իմ նպատակն է օգնել այդ մեծ և նշանակալից գործին ձեռնարկողներին, տալով նրանց ձեռքը մի շարք բրոշուրներ, հանրամատչելի գրքոյկներ անասնապահական օրէնքների, անասնաբուժական կանոնների և էութեան մասին:

Իմ աշխատութիւնները սկսում եմ այս գրքոյկով, որ լիովին նւիրւած է կենդանիների տարափոխիկ հիւանդութիւններին և նրանց դէմ կուելու տարրական միջոցներին: Սրանով եմ սկսում, որովհետև անասունների համաճարակները իւրաքանչիւր տարի միլիոնների քսաններ են հասցնում համայն Ռուսաստանի տնտեսութեան և մանաւանդ Անդրկովկասին, ուր տարիներից ի վեր բոյն է դրել եղջիւրաւոր անասունների ժանդախտ և այլն:

Աշխատել եմ ըստ կարելոյն հանրամատչելի լինել և պարզ խօսել. սակայն դիտութեան մէջ ժողովրդականացումը և հանրամատչելիութիւնը պահանջում է առանձնայատուկ տաղանդ. իմ ջերմ նպատակն է օգտակար լինել և, եթէ գրքոյկիս մէջ ընթերցողը պատահէ մուժ ու խորին դարձւածքների կամ անորոշ և ոչ լրիւ արտայայտութիւնների, խնդրում եմ բացատրութեան պահանջներով դիմել ուղղակի ինձ յարգոյ գիւղատնտեսի խմբագրութեան միջոցով:

Անչափ շնորհակալ կը լինեմ ընկեր-մասնագէտներից, եթէ ցոյց տան իմ սխալները ու շեղումները:

ՍՍԽ. ՀԱՄԱԼԵԱՆ

Ս. Պետրբուրգ.

1912 թ. նոյեմբերի 30

Յ. Գ. Այս համառօտ գրքոյկիս մէջ դիտմամբ չեմ մցրել մի քանի վարակիչ ախտեր (կեղծ սապ, ծծկերների յօդացաւ, ողնաշարի ուղեղի բորբոքում, սեռային ախտ ձիւռ և այլն), ի նկատի առնելով այն հանգամանքը, որ նրանք Ռուսաստանում չափազանց սակաւ են պատահում, մանաւանդ Կովկասում և եթէ երբեմն պատահում են էլ, լուկ իբրև առանձին դէպքեր և բնաւ չեն կրում քիչ-


շատ համաճարակային ընդթ: Չեմ խօսել նաև շների և կատուների մի քանի լուրջ հիւանդութիւնների մասին (օր. ժանդախտ), որովհետև ի նկատի եմ ունեցել առանձնապէս գիւղատնտեսական կենդանիներին:

Համեմատաբար քիչ տեղ եմ տւել ընտանի թռչունների ակտերին, չըկամենալով մեծացնել գրքոյկի ծաւալը: Յուսով եմ պակասը լրացնել պապագայում թէ առանձին աշխատութիւններով և թէ մի շարք հանրամատչելի յօդածներով «Գիւղատնտես»-ի էջերում:

Ս. Հ.

ԱՂԻԻՐՆԵՐ

1. Гапшихъ—Эпизоотология.
2. Натура et Marek—Инфекціонныя болѣзни.
3. Нокаръ и Лекланшь—Микробныя болѣзни животныхъ.
4. Френеръ—Инфекціонныя болѣзни.
5. П. О. Гордзялковскій—Лекціи по эпизоотологии. 4 րէն:



1.

ՍԻԲԻՐԱԽՏ

(Сибирская язва—Anthrax)

Անասունների տարափոխիկ, վարակիչ հիւանդութիւններից Ռուսաստանում ամենից աւելի տարածւածն է սիբիրախտ հիւանդութիւնը, որ իւրաքանչիւր տարի հազարաւոր զոհեր է խլում և պատճառ դառնում երկար շարք ահուկի համաճարակների, որ յաճախ կործանում են հազարաւոր տնտեսութիւններ ու աղքատութեան գիրկը զցում հարիւրաւոր գիւղացիների, խլելով նրանց բարեկեցութեան միակ և զլխաւոր յենարանը—ձին կամ ոչխարների հօտը: Որպէսզի ընթերցողը կարողանայ գոնէ մօտաւոր գաղափար կազմել այդ համաճարակների կործանիչ դերի մասին, անհրաժեշտ եմ համարում առաջ բերել մի քանի վիճակագրական տեղեկութիւններ:

1800 թ. Տորոյսկի նահանգում սատկել են սիբիրախտից 27000 ձի, 1830 թ.—11500 ձի և ոչխար, 1864 թ. սիբիրախտը Ռուսաստանում տարել է 90000-ից էլ աւելի անասուն, 1868 թ. համաճարակը միայն Նովգորոդի նահանգում տարել է 40000 ձի, մօտ 10000 կով և 6000-ից աւելի ոչխար, 1875 թ. Սիբիրում այդ ակտից ընկել են մօտ 100000 ձի, Չայէտը է մոռանալ և այն հանգամանքը, որ սիբիրախտը չափազանց վարակիչ է նաև մարդու համար. օրինակ՝ 1864 թ. Ռուսաստանում սիբիրախտից մեռել են մօտ 700 մարդ, իսկ 1868 թ.—600. եթէ միաժամանակ թողնենք անուշադիր մարդկային զոհերը, հաշուելով դա մասամբ պատահական երևոյթ և ծանրանանք լոկ անասունների կորստեան վրայ, կը գանք այն տխուր, սակայն անժխտելի եզրակացութեանը, որ սիբիրախտը մի կատարեալ խաթաբալայ է ողու տնտեսութեան համար: Եթէ, ի նկատի առնելով 60-ական

Թւականները կեանքի պայմանները, հաշւենք իւրաքանչիւր ձիւ-
կամ կովի արժէքը առնւազն 20 բուրլի, իսկ իւրաքանչիւր ոչ-
խարինը—ամենաքիչը 3 բ.—կը տեսնենք, որ մի տարւայ ըն-
թացքում միայն մի նահանգ կորցրել է աւելի քան 1 միլլիօն
բուրլու անասուն: Չը մոռանանք և այն նշանակալից հանգա-
մանքը, որ առանց անասունի կանգ է առնում ամեն տեսակի
գիւղատնտեսական աշխատանք և այն, որ գիւղացու փոքրիկ և
աղքատ տնտեսութեան համար 1—2 ձին կամ 5—10 ոչխարը
կազմում են նրա գոյութեան, տնտեսական բարօրութեան միակ
նեցուկը: Շնորհիւ անասնաբուժական երկար ու ձիգ աշխատանք-
ների մասամբ յաջողեց այդ համաճարակների առաջն առնել:
Սակայն, անասնաբուժական գործը մինչև այսօր էլ կաղում է
Ռուսաստանում և դրան հետևանք՝ մինչև այսօր էլ սիբիրախտը
իւր ահաւոր հունձը առաջ է տանում, թէև ոչ այնպիսի ահակի
չափերով, ինչպէս տասնեակ տարիներ առաջ: Դեռ 1904 թ.—,
Ուսուցչի սկիզբի կառուցման ժամանակ, սիբիրախաւը
տարւա 2000 ձի, 30 մարդ և համաճարակից ահաբեկւած բանւոր-
ները ստիպւած եղան փախչել աշխատավայրից:

10 տարւայ ընթացքում (1897—1907) Ռուսաստանը սիբի-
րախտին զոհ է տւել 155,871 ձի, 164,006 կով, 120000 ոչխար
և մօտ 4000 խոզ—մօտաւոր արժէք՝ 13¹/₂ միլլիօն բուրլի: Սի-
բիրում կան ահագին տարածութեամբ հողեր, որ տասնեակ տա-
րիներէից ի վեր վարակւած են սիբիրախտով և չեն կարող տեղա-
կան անասունների համար ծառայել իբրև բնական արօտատեղի:

Սիբիրախտով վարակելու հնարաւորութիւնից զերծ չէ ոչ
մի ընտանի կենդանի, բայց մանաւանդ աւերիչ դեր է կատա-
րում այդ համաճարակը ձիերի և ոչխարների մէջ: Ինչպէս
արդէն նկատեցի վերև՝ մարդն ևս հեշտութեամբ վարակում է
այդ ախտով:

Սիբիրախտը այլ կերպ կոչւում է ածխային ախտ, որով-
հետև այդ հիւանդութեան գլխաւոր յատկանիշներից մէկը արեան
սևանալն է. հիւանդ անասունի արիւնը թանձրանում է և ստա-
նում սև, ածուխի գոյն: Օտարազգիները այդ ախտը կոչում են
անթրաքս (antrax), որ բառացի թարգմանւում է ածխային:

Սիբիրախտը, ինչպէս և համարեա բոլոր միւս վարակիչ
հիւանդութիւնները, արեան հիւանդութիւն է, այսինքն, այդ հի-
ւանդութիւնը առաջ բերող պատճառը (փոքրիկ, հասարակ աչքով
անտեսանելի բձէճը-միկրօբը) բնակութիւն է հաստատում ա-
րեան մէջ և վարակում, կերպարանափոխում է արիւնը: Ինչպէս
և բոլոր արեան հիւանդութիւնները—սիբիրախտը սկսւում է ծանր
ջերմով և արիւն կազմող օրգանների, գլխաւորապէս լեարդի
փոփոխութեամբ. վերջինը նոյնպէս սևանում, ածուխի գոյն է
ստանում, մեծանում, և ուռչում: Սիբիրախտը տարածւած է գըլ-
խաւորապէս ցած և խոնաւ տեղերում՝ գետերի ափերին, ճահճոտ
տեղեր և այլն:

Կայ երկու տեսակի սիբիրախտ՝ ներքին ձեւ, երբ կարելի է
նկատել միայն ջերմը և արեան ու լեարդի վերոյիշեալ փոփո-
խութիւնները ու արտաքին, երբ մարմնի այլ և այլ մասերում
կազմւում են սիբիրախտային ուռոյցներ: Սիբիրախտը, ինչպէս
ասացի, չափազանց վարակիչ հիւանդութիւն է և դրանով հիւան-
դացած ձին կարող է վարակել կովին և ընդհակառակը: Վերը ասա-
ցի, որ սիբիրախտ կոչւած ծանր ու վարակիչ հիւանդութեան
պատճառը փոքրիկ, անտեսանելի բձէճներ, միկրօբներ են, որոնք
մտնելով արեան մէջ, առաջ են բերում այդ ախտը: Ապա ինչպէս
է պատահում, որ դրանք ընկնում են անասունի արեան մէջ. կայ
երեք ճանապարհ՝ 1. սնունդի հետ դիցուք, երբ խոտի, արօտի
կամ գարիի վրայ պատահմամբ ընկել են այդ միկրօբները. ձին
ուտում է այդ վարակած խոտը կամ գարին և միկրօբը ընկնում
է արեան մէջ և այնտեղ, զարգանալով ու բազմանալով, սկսւում
իր աւերիչ գործունէութիւնը. 2. Օդի միջոցով. կենդանին, ներս
քաշելով վարակւած օդը, իւր թոքերի մէջ է ընդունում և այդ
միկրօբին, որը այնտեղից հեշտութեամբ անցնում է արեան մէջ
և 3. ուղղակի կաշւի վրայից, եթէ կաշին վիրաւոր է: Այս վեր-
ջին դէպքում միկրօբները բազմանում են հէնց կաշւի տակ և
դրանից առաջ են գալիս սիբիրախտային ուռոյցներ:

Այսպէս թէ այնպէս այդ փոքրիկ և աննշան միկրօբները
հասնելով արիւնատար անօթներին, այնտեղ բազմանում են ահա-
գին չափերով, զարմանալի արագութեամբ և քիչ թէ շատ կարճ
ժամանակայ ընթացքում հասնելով հարիւրաւոր միլլիօնների՝ մի
կողմից խանգարում են արեան կանոնաւոր շրջանառութիւնը և

ապա արտադրում են մի տեսակ ազդու թոյն, որ խլում է անասունի կենսական նիւթերը, այն է՝ թթւածինը, առանց որին երկայութեան ոչ մի կենդանի արարած կարող չէ շարունակել իր գոյութիւնը և կենդանին, ասես, խեղդամահ է լինում. թթւածնի պակասելուն համեմատ մարմնի մէջ մեծանում է ածխածնի չափը, որ դարձեալ մահ է առաջացնում: Հիւանդութիւնը չի քաշում մի որոշ ժամանակ բոլոր կենդանիների համար և հաւասար վարակիչ չէ. այսպէս օրինակ շունը, կատուն և այլ մսակեր կենդանիները շատ սակաւ են վարակում. ձին համեմատաբար աւելի երկար է ընդդիմադրում հիւանդութեանը, քան ոչխարը. վերջիններս յաճախ սատկում են մի-երկու ժամւայ ընթացքում (շանթահարող սիբիրախտ): Սիբիրախտը որոշել յաճախ շատ դժւար է, մանաւանդ նրա ներքին ձևը: Սիբիրախտի մօտաւոր նշաններն են՝ ջերմ. եթէ տաքութիւնը յանկարծ բարձրանում է ահագին չափերով (մինչև 41, 5 աստիճան և աւելի), լորձարդանթները կարմրում են արեան հաւաքելուց, անասունը դառնում է տխուր և ընկճւած, հրաժարում է սնունդից, խմում է ազահութեամբ և ստէպ-ստէպ և, որ գլխաւորն է, սկսում են օարսափելի փորացաւերը (ծակոտում, КОЛИКИ): Այսպիսի ձևի սիբիրախտը անցնում է ահագին արագութեամբ և սպանում իւր զոհին երբեմն 1—2 ժամւայ ընթացքում: Արտաքին ձևը անցնում է շատ աւելի դանդաղ. ջերմը բարձրանում է աստիճանաբար և ամբողջ հիւանդութիւնը քշում է 2—3, իսկ երբեմն և 4—5 օր.: Արտաքին ձևով աւելի յաճախ հիւանդանում են ձիերը, երբեմն կովերը և շատ սակաւ՝ ոչխարները: Ինչպէս արդէն ասացի, արտաքին ձևի համար բնորոշ են սիբիրախտային ուռոյցքները, որ կազմում են կաշւի տակ, մարմնի այլ և այլ մասերում, նախ նրանք կարծր են և տաք, ապա նրանք կակղում են և կպչելիս, այնքան էլ չի ցաւում: Այդ ուռոյցքները մեծ արագութեամբ կարող են բազմանալ և կազմում են գլխաւորապէս ծնօտների տակ: Աւելի շատ այս արտաքին ձևով հիւանդանում են ոչխարները ամառը. այդ բացատրւում է այն հանգամանքով, որ այդ ժամանակ խուզում են նրանց և յաճախ մկրատով վէրքեր կազմում, իսկ այդ վէրքերը սիբիրախտային միկրօբների սիրած ճանապարհներն են: Այս ձևով վարակում են երբեմն նաև խոզերը:

Շատ դժւար է, մանաւանդ մասնագիտական փորձերից ան-

տեղեակ մարդկանց համար, ճանաչել և որոշել սիբիրախտը: Յաճախ միայն այն ժամանակ խելքի են գալիս անասնատէրերը, երբ աւերիչ հիւանդութեամբ վարակում է տաւարի մեծ մասը և ըսկսում ցաւալի համաճարակը: Դրա համար անհրաժեշտ է հիւանդութեան թէկուզ աննշան նշոյլներ նկատելուն պէս, դիմել մասնագէտների օգնութեանը: Սիբիրախտը առհասարակ շատ շուտ ստանում է սուր կերպարանք. սկսում է ջերմը և աղիքների բորբոքումը: Սիբիրախտը շատ ծանր հիւանդութիւն է և սակաւ է յաջողում բժշկել նրանով վարակւած կենդանուն: Բժշկական օգնութիւնը թերեւ կարող է հասնել դրական հետևանքի, եթէ խելոյն և եթ միջամտենք և եթէ հիւանդութիւնը այնքան էլ արագ չի գնում: Ներքին ձևի սիբիրախտը բնորոշւում է գլխաւորապէս մարսողական օրգանների և այն էլ աղիքների լուրջ ու ծանր խանգարումով, ուստի և առաջարկւում է տալ կենդանուն մաքրող միջոցներ. ամինայարմարն է՝ 1—2 օդի բաժակով տալ կրեօլին 20/0՝ օրը մի քանի անգամ և կամ կարթօլեակի քրուտ: Աւելի դրական հետևանքների կարելի է հասնել արտաքին ձևի սիբիրախտը բժշկելիս. այստեղ անհրաժեշտ է նախ և առաջ հեռացնել, կտրել ուռոյցքները և միառժամանակ նրանց շուրջը սրսկել կարթօլեան թթւուտ (5% լուծոյթ), այդ կարելի է կրկնել օրեկան 3—4 անգամ: Ոմանք առաջարկում են նոյնպէս սառոյց կապել ուռոյցքներին: Առհասարակ սուր կերպարանք ստացած սիբիրախտը բժշկել անհնարին է և միայն թեթիւ դէպքերում վերոյիշեալ միջոցները կարող են քիչ-շատ օգնել: Այստեղ աւելորդ չեմ համարում առաջ բերել այն բոլոր բժշկական միջոցները ու դեղերը, որոնցով կարելի է մասամբ կուռել սիբիրախտի դէմ:

1. Կարթօլեակի քրուտ—5—15 գրամ, խառնած մի շիշ ջրի կամ մի ուրիշ ըմպելիքի հետ ձիու, կովի, եզան համար: Ոչխարի համար—1—2 գրամ. տալ օրական մի քանի անգամ:

2. Սալիցիլեակի քրուտ—15—25 գրամ, խառնել արագի հետ և այդ խառնուրդին աւելացնել մի շիշ ջուր. ոչխարի և խոզի համար 2—3 գրամ. տալ 1—2 ժամը մի անգամ:

3. Կրեօլին—10—30 գրամ՝ կովի համար, խառնած 1 շիշ ջրի հետ կամ ջրախառն օդու հետ. ոչխարի և խոզի համար—5—10. օրական մի քանի անգամ:

Կան և մի քանի ուրիշ միջոցներ (եօդ և այլն), սակայն այդ

բոլոր դեղերը կարող են օգնել միայն հիւանդութեան սկզբին և այն էլ թեթև դէպքերում: Միբիրախտի նման չափազանց վարակիչ, ծանր և լուրջ հիւանդութեան դէմ վճռականապէս մաքառելու ամենաճիշտ և ուղիղ ճանապարհն է գործ դնել ամեն ջանք այդ հիւանդութիւնից անասուններին հեռու պահելու համար: Այդ նպատակին կարելի է հասնել նախ անասնապահական թէկուզ տարրական առողջապահութեան գլխաւորագոյն օրէնքները իւրացնելով և իրագործելով և ապա՝ պահպանող սրսկումների դիմելով: Առաջին պահանջներին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ է՝ զով բնակատեղի հիւանդի համար, մաքուր օդ, չափաւոր և դիւրամարս սնունդ, մաքուր, զով ջուր, ապա՝ սիբիրախտից սատկած անասունին իսկոյն և եթ ոչնչացնել առանց մի րոպէ անգամ մտածելու օգտելի նրա կաշուի (վարակելու ամենահեշտ միջոցը կաշին է), մաքրել անպայման ախտուր, գոմը կամ փարախը, ամեն ջանք գործ դնել հիւանդ անասնին իսկոյն եթ զատելու և հեռացնելու միւսներին: աւելի լաւ է ոչնչացնել հիւանդին, քան թոյլ տալ, որ վարակեն միւսները: Այս բոլոր առողջապահական և զգուշութեան միջոցները առաջին տեղն են բռնում վարակիչ և տարափոխիկ հիւանդութիւնների դէմ կուրու գործում և աւելի ազդեցիկ են, քան բոլոր դեղերը ու միջոցները: Բայց մանաւանդ նշանակալից և արդիւնաւէտ են պահպանողական սրսկումները (ПРИВИВКИ), որոնց մասին սակայն աւելորդ եմ համարում խօսելը, որովհետև դա զուտ մասնագիտական գործ է. սիբիրախտը կրեւորուն պէս իւրաքանչիւր տնատէր պէտք է անյապազ դիմէ մասնագէտի, որպէսզի օր առաջ սրսկման ենթարկւին բոլոր անասունները:

2.
Ս Ա Պ
 (Сашъ.—Tallets).

Ռուսաստանում մեծ չափերով տարածւած անասնական համաճարակների մէջ վիրոյիչեալ սիբիրախտ կոչած ծանր և չափազանց վարակիչ հիւանդութիւնից յետոյ առաջին տեղն է բռնում անշուշտ Սալ կոչած ոչ պակաս ծանր և գուցէ աւելի վարակիչ հիւանդութիւնը: Սալով վարակում են գլխաւորապէս ձին և էջը, շատ սակաւ՝ շունը և համարեա երբէք՝ եղջիւրաւոր անասունները: Շատ հին ժամանակներից յայտնի է այդ ախտը, սակայն առաջ գիտնականները շատ քիչ տեղեկութիւն ունէին նրա մասին, կարծելով, որ դա հոմանիչ է մարդու թուրախտին կամ վատ ցաւին (սիֆիլիս): Սակայն արդէն XVII դարու վերջերից սըկսած մի շարք ֆրանսիական և գերմանական գիտնականներ սկսեցին ամենալուրջ ուշադրութեամբ ուսումնասիրել այդ տարածւած և կործանիչ հիւանդութիւնը և յանգեցան այն գաղափարին, որ դա մի առանձնայատուկ, ծանր և չափազանց վարակիչ հիւանդութիւն է, որից ամենայաճախ հիւանդանում է ձին Շատ ժամանակ աշուրուրջ ուշադրութեամբ ուսումնասիրելուց յետոյ, յայտնի գերմանական բնախօս Շիւտցը գտաւ և այդ հիւանդութեան գրգիչ—միկիրօբը:

Մի քանի հետաքրքիր թւերով պարզենք այդ հիւանդութեան նշանակութիւնը և աւերիչ դերը Ռուսաստանի տնտեսական կեանքում: Ընթերցողի ուշադրութիւնը չ' ծանրարեմնելու համար, բաւականանք յիշելով այսքանը, որ միայն 1906 թ. Ռուսաստանը կորցրել է սապից 4395 ձի, որ միջին արժողութեամբ կազմում է մօտ 600000 ըուրլի:

Ինչպէս և սիբիրախտը, որպէս և համարեա բոլոր սուր կերպարանք ունեցող տարափոխիկ հիւանդութիւնները, սապը առաջ են գալիս նրանից, որ այդ հիւանդութեան գրգիչները, միկ-

բօքները այս կամ այն (սնունդի, օդի կամ վիրաւորւած կաշու) միջոցով մտնում են կենդանու մարմնի մէջ, գնում են արեան հոսանքով և բազմանալով ու աճելով առաջ են բերում մարմնի և օրգանների մի շարք լուրջ ու ծանր փոփոխութիւններ, որ յաճախ վերջանում են մահամբ: Այդ միկրօբները հաւաքուում են գլխաւորապէս լիմֆային հեղուկը մղող անօթների մէջ և հաւաքուելով այնտեղ կազմում են համեմատաբար փոքրիկ ուռոյցքներ, որ կոչուում են սապային ճանգոյցներ: Այդ հանգոյցները կամացկամաց մեծանում են և այդ մեծանալու հետ միաժամանակ նըրանց միջուկը, կենտրոնական մասը, կակուում է, ջրալի կերպարանք ստանում և դառնում թարախ: Յետոյ այդ ուռոյցքները քանդուում են աստիճանաբար և կազմում են արիւնահոս, կամ թարախալի վէրքեր: Միկրօբները արեան հոսանքով կարող են հասնել մարմնի բոլոր օրգաններին և ամենուրէք կազմել այդօրինակ հանգոյցներ (մահաւանդ թոքերի մէջ): Սապը կարող է և՛ սուր կերպարանք ստանալ ու մի քանի օրուայ ընթացքում սպանել իւր դոհին. այդօրինակ սուր ընթացքում սապը մահաւանդ բնորոշ է սակաւ վարակւող կենդանիների համար (շուշը), այն ինչ ձին աւելի յաճախ հիւանդանում է քրոնիկական, երկարատև սապով: Նայելով թէ, մարմնի որ մասը աւելի բոնւած է սապով, վերջինս բաժանուում է երեք ձևի՝ քրի սապ, քոքերի եւ կայրի:

1. Քրի սապ: Մրանով աւելի յաճախ վարակուում է ձին. ընթացքը քրոնիկական է, երբեմն տևում է մի քանի (5-6) տարի: Այս ձևի համար բնորոշ են քթի լորձաթաղանթի վրայ ակնբերև նկատուող ճերմակաւուն հանգոյցներ՝ կարմիր ծայրերով (գոտի): Երբեմն փոխանակ հանգոյցի նկատուում են բշտիկներ: Եթէ հիւանդութիւն վաղուց է սկսւած, փոխանակ հանգոյցների և բշտիկների նկատուում են վէրքեր, որոնք երբեմն մեծութեամբ հասնում են հինգ կոպէկանոց դրամի մեծութեան: Այդ վէրքերը ունին վարդագոյն խորթուրորդ մակերևոյթ և հաստիկ ծայրեր: Այդօրինակ վէրքեր պատահում են գլխաւորապէս քթի լորձաթաղանթի վերին մասում: Բացի դրանից, յաճախ քթի արանքից հոսում է դեղնաւուն, թարախաման հեղուկ աւելի յաճախ այդ նկատուում է միայն մէկ կողմից: Երբեմն նաև նկատելի կերպով ուռչում են ծնոտի տակ գտնուող գեղձերը:

2. Թոքերի սապ: Այս ձևը բնորոշել շատ դժուար է, որովհետև գլխաւոր նշանն է թոքերում մեծ քանակութեամբ կազմուող հանգոյցները. սակայն պարզ է, որ այդ հանգամանքը արտաքուստ նկատել անհնարին է և այդ իսկ պատճառով այս ձևի սապը կոչուում է նաև ծածուկ սապ: Սակայն կան մի քանի արտաքին նշաններ ևս, որոնց օգնութեամբ երբեմն հնարաւոր է դառնում բնորոշել հիւանդութիւնը. դրանք են՝ բուրդը գզգզած է լինում, հիւանդը յաճախ քրտնում է առանց հասկանալի պատճառների, նիհարում է և լլարում՝ չընայած առատ և ընտիր սնունդի, յաճախ հազում է:

3. Կայրի սապ: Մրա գլխաւոր նշաններն են. մի շարք բնորոշ, փոքրիկ հանգոյցներ՝ կաշւի տակ, գլխաւորապէս ազդրերի և վզի վրայ: Բնորոշ է նաև առնական անդամների ուռչելը և դրան հետևանք՝ կաղալը, այնպէս որ ձիու յանկարծ կաղալը առանց որ և է ակներև արտաքին (ոտքերի) հիւանդութեան արդէն իսկ կասկածելի է սապի տեսակէտից:

Կան նաև մի շարք այլ, մասամբ պատահական, երևոյթներ, որոնք սակայն նշանակալից են դառնում սապի կասկած լինելու դէպքում. օրինակ. հիւանդը դառնում է յաճախ քմահաճ, ի մեծ զարմանս իւր տիրոջ, հրաժարուում է համեղ և առաջնակարգ սնունդից, ստէպ-ստէպ յօրանջում է, շուտ և թեթև աշխատանքից յանկարծ յոգնում է և այլն:

Ինչ վերաբերում է սուր կերպարանք ունեցող սապին, նրա համար բնորոշ են՝ 1. վէրքեր՝ քթի լորձաթաղանթի և անգամ կաշւի վրայ, 2. ջերմութիւնը հասնում է մինչև 41 աստիճանի, 3. արագ կերպով քթի միջի հանգոյցները դառնում են բշտիկներ և այս վերջիններս պատառւելով, միանում և կազմում մի ընդհանուր, մեծ վէրք, 4. հոսում է քթի երկու արանքներից ևս, 5. դրանից դժուարանում է շնչառութիւնը, 6. լիմֆային գեղձերը նկատելի կերպով ուռչում են:

Այս սուր կերպարանքի սապով ձին վարակուում է շատ սակաւ. աւելի բնորոշ է նա էշի համար:

Մասնազէտները համարեա միաձայն գալիս են այն եզրակացութեան, որ սապով վարակւած ձին կարող է երբեմն ինքնաբերաբար բժշկուել առանց որ և է բժշկական օգնութեան, և թէ միայն խստիւ պահպանւեն առողջապահական պայմանները: Սա-

կայն դա, անշուշտ, չի նշանակում որ մենք պէտք է անուշադիր թողնենք սապով հիւանդանին. բնաւ երբէք, որովհետեւ որքան էլ թեթեւ ձևի սապով վարակւած լինի ձին, նա կարող է անպայման վարակել միւսներին և վարակել ամենածանր կերպով: Ուստի մենք պարտական ենք իսկոյն և եթ զատել հիւանդին միւսներէրից, մաքրել ախոռը ամենաուշադիր կերպով և այլն:

Ուրեմն սուր ընթացք ունեցող սապը բնորոշուում է բարձր աստիճան ջերմութեամբ և կաշի լորձաթաղանթի փոփոխութիւններով: Գրոնիկական սապը բնորոշուում է՝ 1. քթից հոսելով, 2. բշտիկներով ու վէրքերով, 3. վէրքերի հետքերով, 4. հանգոյցներով և 5. լիմֆային (ծնոտի տակ գտնուող) գեղձերի ուռուցքով: Կարևոր է նկատել, որ սապը կարելի է շփոթել մի երկու ուրիշ տարափոխիկ հիւանդութիւնների հետ, ուստի առաջարկուում է յանգել դրական եզրակացութեան միայն այն դէպքում, երբ ակններև են վերոյիշեալ բնորոշ նշաններից մի քանիսը միաժամանակ:

Ինչպէս բոլոր այն հիւանդութիւնները, որ առաջանում են միկրօբների գործունէութիւնից, այնպէս էլ սապը բնորոշելու համար կարելի է, անշուշտ, դիմել մի շարք փորձնական և գիտական հետազոտութիւնների (միկրօսկօպի օգնութեամբ կամ փորձնական կենդանիներին պատւաստելով). սակայն այդ բոլոր միջոցների բաւարար պատասխան չը տալու պատճառով, գիտնականները երկար հետազոտութիւններից և ուսումնասիրութիւններից յետոյ դիմել են այդ հէնց հիւանդութեան թուլացրած կամ սպանած միկրօբները հիւանդ կենդանուն պատւաստելու և ըստ դրա հետեանքներին դրական կամ բացասական եզրակացութեան գալու ամենաընտիր և յաճախ միակ ուղիղ միջոցին:

Այդ փորձած միջոցին դիմում են թէ մարդու և թէ անասունի կասկածելի թոքախտը բնորոշելիս. դիմում են նաև ծածկւած սապը պարզաբանելու համար: Այդ միջոցը կոչուում է մալլէինիզացիա: Աւելորդ եմ համարում մանրամասն խօսել դրա էութեան, սկզբունքների և հետեանքների մասին, որովհետեւ դա զուտ գիտական և մասնագիտական լուրջ խնդիր է, որ իզուր կը ծանրաբեռնէ ընթացողի ուշադրութիւնը: Այսքանը միայն. կարևոր եմ համարում նկատել, որ սապի անգամ չնչին կասկած յարուցանելու դէպքում, անհրաժեշտ է անյապաղ դիմել մասնագէտի

օգնութեանը, որ անշուշտ, ամեն միջոց գործ կը դնէ հիւանդութիւնը պարզելու համար:

Ապա ինչ միջոցներով պէտք է կուել սապի դէմ: Մտալը Ռուսաստանում տարածւած է՝ ահագին չափով. ըստ վիճակագրական տեղեկութիւնների, Ռուսաստանում իւրաքանչիւր մի 1000 ձիուց 4-ը սապով են վարակւած: Պարզ է ուրեմն, որ այդ հիւանդութեանը ահագին հարւած է հասցնում երկրի տնտեսական բարօրութիւնը և անհրաժեշտ է ամենախիստ միջոցներով կուել այդ ախտի դէմ: Յիրաւի, Ռուսաստանը, որ տասնեակ տարիների ընթացքում միլիոնների և աստնեակ միլիոնների զլաւներ է կրել այդ աւերիչ համաճարակից, ստեղծել է ամենախիստ միջոցներ Երա դէմ կուելու: Ըստ Ռուսաստանի օրէնքների ամեն մէկ սապով վարակւած ձի պէտք է անյապաղ դնակահարւի և նրա դիակը ամենայն զգուշութեամբ թաղւի, ապա պէտք է մաքրել ախոռը և առհասարակ ամենախիստ միջոցներով ջանալ ոչնչացնել հիւանդութեան վարակիչ ոգին: Այն ստիպողական միջոցը, որ ըստ մի բերկրի օրէնքների, սապոտ ձին պէտք է սպանւի, հասկանալի է դարձնում այն հանգամանքը, որ պէտք է ջանալ ամեն կերպ իսկապէս որոշել, որ ձին սապով է եղել հիւանդ. խեղճ ու կրակ գիւղական տնտեսութեան համար ձին մի անգին էակ է և ոչնչացնել այն առանց վերջնականապէս պարզած հիմունքի—անհնարին է:

Երա համար էլ դիտութիւնը, երկարամեայ ջանքերից յետոյ, հասել է մի շարք զուտ գիտական, լուրջ միջոցների, որոնց շնորհիւ անասնաբույժը միշտ կարող է որոշել սապը. Իսկ առանց մասնագէտի հրամանին ոչ որ իրաւունք չունի սպանել կասկածելի ձիուն:

Բացի ակնյայտ կերպով հիւանդ ձին ոչնչացնելուց, անպայման հարկաւոր է վարակման կասկած յարուցանող անասուններին լիովին զատել միւսներից և զատած պահել մօտ 2—3 ամիս. եթէ այդ ժամանակաւ ընթացքում սապը չարտայայտի—կասկածը անհիմն է:

Սապի բժշկութեան մասին ոչ մի խօսք կարող չէ լինել, որովհետեւ մինչև այսօր երկար շարք գիտնականների և մասնագէտների գործածած բազմատեսակ դեղերը չեն տուել բացարձակապէս ոչ մի դրական հետեանք: Սապը-անբժշկելի հիւանդու-

թիւն է և հէնց որ նա վերջնականապէս որոշեած է, հիւանդը պէտք է սպանւի: Վերջին ժամանակներս մի շարք անասնաբույժեր մեծ եռանդով սկսեցին փորձեր կատարել՝ բժշկելու սապը պրօֆ. Էն-րլիխի աշխարհահռչակ «606»-ով, սակայն դեռ ևս այդ հետազոտութիւնները ու փորձերը մի որոշ եզրակացութեան յանգած չեն:

Սապով հիւանդանում են գլխաւորապէս չափազանց ծանր աշխատանք կրող և միաժամանակ հակաառողջապահական և ծանր պայմաններում ապրող ձիերը:

Սապը վարակիչ է նաև մարդու համար. ամենից յաճախ վարակում են քթից հոսող հեղուկից, որ ձիու փռշտալու ժամանակ կարող է հեշտութեամբ ընկնել դէմը կանգնած մարդու վրայ: Ուստի, սապով հիւանդ կամ կասկածելի ձիուն չի կարելի մօտենալ կամ կանգնել դէմը. պէտք է կողքին կանգնել:

Մանաւանդ ծանր և համարեա միշտ մահացու է սապը էշի համար:

ԴԱՖԱՂ

(Ящуръ.— Aphtae episooticae)

Օիբրախտից և սապից պակաս աւերիչ դեր չի կատարում Ռուսաստանի առհասարակ դիւզատնտեսութեան և մանաւանդ կաթնատնտեսութեան մէջ այսպէս կոչւած դաբաղ (ящуръ-ն) տարափոխիկ ու շատ վարակիչ ախտը, որով հիւանդանում են մանր ու խոշոր եղջիւրաւոր անասունները (կով, եզ, ոչխար, և այլն և այլն): Թէև այս հիւանդութիւնը այնքան էլ ծանր ու մահացու չէ և շատ յաճախ նրանով վարակւած անասունը մի որոշ ժամանակից լիովին առողջանում է և կազդուրւում (մահացու դէպքեր պատահում են 100-ից 1—3), սակայն եթէ ի նկատի առնենք այն նշանակալից հանգամանքը, որ դաբաղով հիւանդացած կենդանին լիովին անկարող է աշխատել և պէտք ունի անպայման, երկարատև հանգստութեան և բժշկութեան, այլև մտաբերենք այն, որ դաբաղով հիւանդ կովի կամ ոչխարի կաթը չափազանց փրօսակար և վարակիչ է—կրգանք այն տխուր հզորակացութեան, որ այս ախտը ևս կարող է ահագին փլամներ հասցնել անասնատէրերին և առհասարակ երկրի տնտեսութեանը և, մանաւանդ, կաթնատնտեսութեանը:

Դաբաղը Ռուսաստանում տարածւած է անեկի չափերով. բաւականաբար յիշելով, որ 1905 թւին Ռուսաստանում դաբաղով հիւանդ են եղել՝ 2,141,035 կով, 547,039 ոչխար և 46,000 խոզ: Եթէ հիւանդութեան ընթացքում դրանցից իւրաքանչիւրի հասցրս ծփասը (առանց հաշուելու բժշկական օգնութիւնը) հաշուենք առնւազն 2 բուբի—կըստանանք մի պատկառելի գումար — մօտ 6 միլիոն բուբի:

Դաբաղը չափազանց վարակիչ է: Հիւանդանում են նրանով գլխաւորապէս կովը, եզը և ոչխարը, յաճախ խոզը: Յսյտնի է շատ հին ժամանակներից, սակայն մինչև այսօր էլ, չնայած մի շարք գիտնական մասնագէտների ջանքերին, յաջողած չէ գտնել

այդ ախտի զրդիչը, միկրօբը: Վարակել կենդանին կարող է թէ անմիջապէս հիւանդ կենդանուց, թէ այլ և այլ վարակեած առարկաներին քուլելով (երկաթուղու վագոններ, ջրի ամաններ և այլն), և թէ մարդու և ուրիշ կենդանիների միջոցով: Այս հիւանդութիւնը շատ ծանր և լուրջ է նրա համար. որ մի անգամ արդէն վարակեած և առողջացած անասունը կարող է դարձեալ վարակել և հիւանդանալ: Ամենից աւելի դաբաղը տարածուած է տաւարի մէջ գարնանը և ամառը: Մանաւանդ հեշտութեամբ վարակուած են ջահել անասունները և մանաւանդ կաթնատու տեսակի կովերը: Շատ ծանր կերպարանք է ստանում դաբաղը ծծկեր կենդանիների մօտ:

Դաբաղ կոչուած հիւանդութեան էութիւնը կազմուած է նրանում, որ վարակելուց 3—6 օր անցած, բերանի լորձաթաղանթի վրայ և նաև են գալիս բազմաթիւ կարմրաւուն բծեր և այդ տեղերը շատ ցաւոտ են դառնում: Զերմութիւնը հասնում է մինչև 40—41⁰. կարճ ժամանակից յետոյ (մի օրից) այդ կարմիր բծերը դառնում են բշտիկներ և հիւանդ անասունը ցաւից ստիպուած է բերանը բաց պահել: 1—2 օրից այդ փոքրիկ բշտիկները պատուում են, նրանց միջի հեղուկը դուրս հոսում, յետ լորձաթաղանթի մի մասը չորանում և թափւում. այդպիսով հիւանդ կենդանու բերանի մէջ կազմւում են մի շարք վէրքեր: Հէնց որ կատարւում է այդ, այսինքն պատուում են բշտիկները.— ջերմը անցնում է զգալի չափերով: Այդ բոլորը կատարւում է 2—3 օր ևայ ընթացքում և դրանից յետոյ անասունը սկսում է առողջանալ՝ վէրքերը կամաց-կամաց բուժւում և կապւում են, նրանց մակերևոյթը չորանում: Բացի վերոյիշեալ նշաններից, բնորոշ է այն, որ բերանից անդադար թուրք վաղում է և բացի դրանից, լսում է ծնոտների տարօրինակ ձայն, ինչպէս որ լսում է ագահութեամբ և արագ մի լան ծամելուց, երբեմն վերոյիշեալ բըշտիկները և վէրքերը լինում են նաև կոկորդի, շնչափողի և այլ ներքին օրգանների լորձաթաղանթի վրայ: Իսկ յաճախ նաև քթի և պտոշի վրայ:

Փոքրահասակ և գլխաւորապէս ծծկեր անասունների մօտ յաճախ այդ երևոյթները նկատուում են նաև աղիքների թաղանթի վրայ և դրանից առաջ է գալիս ծանր և լուրջ փորլուծութիւն (ПОНОСЬ): Բշտիկները և պա վէրքերը, տարածւում նաև դոստի-

քի ներքին մասերի վրայ և դրանով բացատրւում է այն հանգամանքը, որ դաբաղով հիւանդ անասունները բոլորովին չեն կարող ման գալ և կամ ման են գալիս մեծ դժւարութեամբ և դժգոհութեամբ: Նոյնը նկատուում է յաճախ ծծերի վրայ. պտուկների շուրջը նկատուում են նախ՝ բծեր, ապա՝ բշտիկներ և յետոյ՝ վէրքեր: Դրանից կաթը բոլորովին փչանում է և նոյն իսկ յաճախ չի ստացւում՝ կաթնատար ուղիները փակելու պատճառով: Բացի դրանից, բշտիկներ և վէրքեր երբեմն նկատուում են եղջիրների մօտ (հիմքում), ականջների մօտ, ազդերի և պարանոցի վրայ և այլն: Յաճախ դաբաղը կարող է առաջ բերել այլ և այլ ուրիշ հիւանդութիւններ և դրանով բժշկութիւնը բարդանում և դժւարանում է (օր. ստինքի բորբոքում, շնչառութեան դժւարանալը և այլն):

Ինչպէս արդէն ասացի, մանաւանդ տրամադիր են դաբաղով վարակելու ջահել անասունները և նրանց մօտ դաբաղը աւելի բարդ և ծանր կերպարանք է ստանում, այն ինչ հասակաւոր կենդանիները համեմատաբար հեշտ են բուժւում: Աւելի հեշտ է անցնում դաբաղը ամառը, քան աշնանը կամ ձմեռը: Դաբաղը կարող է շարունակել մինչև 3 շաբաթ, սակայն արդէն 10-րդ օրը վերաւոր լորձաթաղանթը սկսում է կազուրել և հիւանդութիւնը կարելի է արդէն անցած համարել, առանց սակայն աշխատանքի համար գործածելու հիւանդին:

Կովը և եզը յաճախ հիւանդանում են դաբաղով և նրանց մօտ միաժամանակ ցաւն բոյն է դնում և՛ բերանի մէջ, և՛ սմբակների վրայ, այն ինչ խոզերը հիւանդանում են աւելի յաճախ սմբակի դաբաղով: Դաբաղով երբեմն վարակւում են նաև թըռչունները (վէրքեր կոկորդի մէջ և սանրի վրայ):

Ապա ինչպէս բժշկել դաբաղը.

Են արդէն բանիցս նկատեցի, որ դաբաղը համեմատաբար թեթև հիւանդութիւն է և շատ սակաւ վերջանում է մահամբ: Այդ իսկ պատճառով առանձին խիստ բժշկական օգնութեան կարիք չի զգացւում և բժշկութեան գլխաւորագոյն պայմանն է՝ զգուշութիւնը և առողջապահութիւնը: Հիւանդ անասունը պէտք է լիովին ազատ լինի որ և է, անգամ թեթև, աշխատանքից մինչև բոլորովին կազուրելը (առնւազն 2 շաբաթ): Գոմը պէտք է լինի անպայման մաքուր, օդը մաքուր և բաւարար սնունդը — համապատաս-

խան. անհրաժեշտ է տալ կակուղ և միևնոյն ժամանակ առատ և սննդարար կերակուր. ամենից յարմարը կաթն է. կարելի է տալ նաև խոտ, բայց անպայման մաքուր և կակուղ: Ոմանք առաջարկում են սնունդի հետ տալ մի քիչ քացախ կամ աղային թթու (СОЛЯНАЯ КИСЛОТА) 2—3 գրամ մի վեդրո սնունդին:

Բերանի մէջ նկատած բշտիկները և վէրքերը ամենայարմարն է թողնել, որ իրանք բուժեն և միայն ամենածանր դէպքերում կարելի է բերանը ողողել 20%-անոց կրէօլինով (КРЕОЛИНЪ) և կամ բորակով: Ստինքների բորբոքումը կարելի է բժշկել КАМФОРНАЯ МАЗЬ) քսելով վարակած մասերին:

Հասկանալի է, որ հիւանդ անասունին պէտք է հեռու պահել առողջներից և առհասարակ գործ դնել ամենախիստ զգուշութիւն:

Դարպով չը հիւանդանալու համար գոյութիւն ունին մի քանի տեսակ սրսկւմներ, սակայն անասնաբուժական երկար փորձերը ցոյց են տալիս, որ դրանք առժամանակեայ են և յաճախ անօգուտ:

Մի անգամ ևս անհրաժեշտ եմ համարում շեշտել, որ դարպով հիւանդ կովի կամ ոչխարի կաթը անպայման վարակել է մարդկանց, մանաւանդ երեխաների համար, ուստի այդպիսի կաթը կարելի է գործածել միայն եփած:

Առողջացող անասունների միսը կարելի է գործածել բացի լեզուից ոտքերից և եղջիւրից:



4.

ԵՂՋԻՐԱՅԻՐ ԱՆՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆԴԱՄՏ

(Чума рогатого скота.—Pestis bovina)

Ահա մի ահուկի ախտ, որ դեռ ևս հին դարերից սկսած պատճառ է եղել գործուրերի համաճարակների և հասցրել համայն Եւրոպայի և Ասիայի անասնապահութեանը միշտ անասելի ծանր և յաճախ նոյն իսկ մահացու հարւածներ: Եղջիւրաւոր անասունների ժանդախտի պատմութիւնը այնչափ հարուստ է, զարմանալի և միևնոյն ժամանակ սոսկալի թւերով, որ ևս չեմ կարող և մի քիչ կանգ չառնել այդ պատմութեան վրայ և գոնէ թուցիկ ակնարկ չը նետել այդ հետաքրքիր տեղեկութիւնների և թւերի վրայ:

1713

Եղջիւրաւոր անասունների ժանդախտը, ըստ միջնադարեան պատմագիրների, Եւրոպա է մտել Ասիայից դեռ ևս ազգերի մեծ տեղափոխութեան միջոցին, այսինքն միջին դարերի սկիզբը: 1713 թ. Հոմեր ժանդախտից կորցրեց 9 ամսւայ ընթացքում 30,000 կով և ամբողջ քաղաքը մնաց առանց կաթի: 1740 թ. Արևմտեան Եւրոպայում ժանդախտը տարաւ աւելի քան 2 միլիոն եղջիւրաւոր անասուն: Ըստ պատմագիրների, ամբողջ XVIII դարու ընթացքում Արևմտեան Եւրոպան կորցրել է ժանդախտից եղջիւրաւոր անասուններ մօտ 300 միլիոն գլուխ: 1842 թ. Եգիպտոսում ժանդախտը տարել է 700,000 անասուն. 60-ական թւականներին Անգլիան կորցրել է աւելի քան 200 միլիոն ֆլորանդ արժողութեամբ անասուն: 1890 թ. ժանդախտը Աֆրիկայում ոչնչացրել է համարեա ամբողջ տաւարը: Եւրոպական պետութիւնները, հասկանալով այդ ահուկի համաճարակների լիովին կորստաբեր և կործանիչ ոյժը, ստիպւած եղան ղիմել ամանախիստ և ազգու միջոցների, տասնեակ երկար ու ձիգ տարիներ 2 արունակող անողոք կուրը—ունեցաւ իւր դրական հետևանքները և վերջ ի վերջոյ Եւրոպական կուլտուրական պետութիւններին

յաջողեց համարեա լիովին ազատել այդ զարհուրելի համաճարակներէց և պահպանել իրան տնտեսութիւնը այդ կորստաբեր ախտից: XIX դարու վերջերին եղջիւրաւոր անասունների ժանդախտը համարեա հիմնովին արտաքսեց Արևմտեան Եւրոպայից և մնաց միայն Լեհաստանում և Ռուսաստանում: 1865 թւականին Ռուսաստանի Րէվել ծովաքաղաքից ժանդախտը անցաւ Անգլիա և առաջ բերեց Արևմտեան Եւրոպայում մի նոր զարհուրելի համաճարակ: Անգլիան կորցրեց մօտ 300,000 անասուն, գլխաւորապէս կուլտուրական և թանգարժէք տեռակի կովերից: Անգլիայում սկսեց չը տեսնուած կաթի սով: այստեղից համաճարակը անցաւ Հոլլանդիա, ուր ոչնչացրեց համարեա ամբողջ տաւարը և ապա՝ Բելգիա, ահռելի պատուհասից դերձ չմնաց նաև Ֆրանսիան, ուր համաճարակը լափեց, ոչնչացրեց Պարիզի անւանի կենդանաբանական պարտէզը: Սակայն, չնայած այս ահռելի թւերին, Եւրոպային յաջողեց, շնորհիւ մի շարք լուրջ և խիստ կուլտուրական-առողջապահական միջոցների, կուել այդ ախտի դէմ և յաղթանակ տաւել: Վերջին սնգամ ժանդախտը երևաց Եւրոպայում 1871 թ., ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ, երբ գերմանացիք, օգտուելով ռուսական տաւարով, վարակեցին թէ՛ իրանց և թէ՛ հակառակ բանակի անասուններին:

Դրանից յետոյ եղջիւրաւոր անասունների ժանդախտը բաժին մնաց լոկ Լեհաստանին և Ռուսաստանին, սակայն առաջինը շուտով կարողացաւ վերջ տալ այդ համաճարակներին, շնորհիւ դեռ ևս Նապօլէօնի հաստատած պարտադիր օրէնքների, ըստ որոնց իւրաքանչիւր ժանդախտոր վարակած անասուն պէտք է անյապաղ սպանել: Այդպիսով ժանդախտի ահեղ պարծունէութեան լայն և ազատ ասպարէզ մնաց լոկ մեր հայրենիքում, որ շնորհիւ իւր ցած քաղաքակրթութեան և անասնաբուժական գործի կաղալուն, անգոր էր ըստ արժանւոյն կռիւ մղել երկրի տընտեսական բարօրութեան և դիւղատնտեսութեան տանելի կացութեան այդ ռիսկերիմ և անողոք թշնամու դէմ: Սակայն, երկար ժամանակ այդ օրինակ դրութիւնը շարունակել կարող չէր: ժանդախտը սպառնում էր վերջնականապէս ոչնչացնել Ռուսաստանի տնտեսական կացութեան գլխաւորագոյն հիմնաքարը—անասնապահութիւնը:

80-ական թւականներին ժանդախտը Ռուսաստանում տա-

նում էր իւրաքանչիւր տարի մօտ 300,000 գոհ (արժէքը տոնագն 10 միլլիօն ռ.): 1884 թւին Սամարայի նահանգը ծախսել է ժանդախտի դէմ կուելու համար աւելի քան 2 միլլիօն ռուբլի և անօգուտ, շնորհիւ որոշ, փորձած գիտական սխալէմի բացակայութեան: 1887—1891 թւերի ընթացքում Հիւսիսային կովկասում ժանդախտից ստուկում է 130,000 անասուն: 1870—1895 թւականների. այսինքն 25 տարւայ ընթացքում, Ռուսաստանը կորցրել է ժանդախտից եղջիւրաւոր անասուններ մօտ 4 միլլիօն գըլուխ, որ կարժէ տոնագն 150 միլլիօն ռուբլի: Սա, անպայման, ստակալի հարւած էր երկրի տնտեսութեան համար և պէտք էր օր առաջ միջոցներ ձեռք առնել այդ պատուհասից, եթէ ոչ վերջնականապէս, գոնէ մասամբ ազատուելու համար: Բացի դրանից, 70-ական թւականներին մի շարք եւրոպական պետութիւններ, աչքի առաջ ունենալով հարատւ վարակման հետու նկարը և լաւ մտաբերելով 1865 թւականի աղէտը, դիմում են Ռուսաց կառավարութեան և առաջարկում ամենախիստ միջոցներ ձեռք առնել ժանդախտի դէմ, սպառնալով հակառակ դէպքում փակել եւրոպական շուկաները ռուսական անասունների և զանազան գիւղատնտեսական պիտոյքների արտահանութեան դէմ: Այս նշանակալից հանգամանքը միանալով երկրի տնտեսական բարեկեցութիւնը ըստ կարելւոյն ապահով դարձնելու անհրաժեշտութեան հետ, ստիպում են Ռուս կառավարութեանը դիմել արմատական միջոցների: Դեռ ևս 70-ական թւականներին Ներքին Գործերի նախարարութեան կից հիմնած անասնաբուժական կոմիտէն սկսում է իւր գործունէութիւնը: Երևան են գալիս մի շարք եւրոպացիներ ու գործունեայ օնձնաւորութիւններ (պրօֆ. Բալիչ, Պէշտիչ և այլն), որոնք և համոզում են, ում հարկն է, հաստատել հիւանդ անասուններին անպայման սպանելու պարտադիր օրէնքը (3 յունիսի 1879 թ.): Տարիների ընթացքում, շնորհիւ միայն և միայն մի շարք անասնաբուժական և առողջապահական միջոցների, յաջողեց այդ սարսափելի համաճարակներից համարեա իսպառ ազատել ամբողջ Եւրոպական Ռուսաստանը և այսօր եղջիւրաւոր անասունների ժանդախտը մնացել է միայն հեռաւոր ծայրագաւառներում և գլխաւորապէս՝ Անգրիկովկասում, Թուրքաստանում և Ամուրի շրջանում:

Սակայն այդտեղ ևս հիմնւած են ժանդախտի դէմ կուելու

համար առանձին կայաններ (Զուռնասպատ և այլն): Պէտք է յուսալ՝ որ անասնաբուժական գ' տուութեան ծաղկումը և, որ գլխաւորն է, ազգաբնակչութեան համակիր վերաբերմունքը դէպի այն, վերջնականապէս կը սպանէ այդ պատուհասի գոյութիւնը Ռուսաստանում:

Այս հետաքրքիր, համառօտ պատմական ակնարկից յետոյ անցնենք հիւանդութեան պատճառների և էութեան լուսարանութեանը:



Անասնաբուժական գիտութիւնը մինչև օրս ան դօր է մնացել գտնելու այդ հարկու ախտը առաջ բերող պատճառը, դրդիչը: Անպայման, ժանդախտը, ի՛նչպէս և բոլոր տարափոխիկ, վարակիչ հիւանդութիւնները, առաջ է գալիս առանձնայատուկ դրդիչի՝ միկրօբի շնորհիւ, սակայն մինչև օրս այդ միկրօբը տեսնել անհնարին է եղել, չնայած մի շարք գիտնականների (Նիկօլ, Ադիլըլ և այլն) ջանքերին: Այդ միկրօբը անտեսանելի է ոչ միայն հասարակ, անդէն աչքով, այլ և ամենակատարեալ միկրօսկոպների օգնութեամբ անգամ:

Ժանդախտով հիւանդանում են եղջիրաւոր, խոտակեր անասունները-կով, եզ, ոչխար և այծ. Մարսափելի վարակիչ է և նոյն իսկ չը վիրաւորւած, ողջ կաշին կարող է նպաստել վարակմանը: Վարակւած այծերը իրանք հիւանդանում են թեթև կերկրպով, բայց հեշտութեամբ վարակում են ուրիշներին: Ինչպէս և բոլոր ծանր և լուրջ վարակիչ հիւանդութիւնները, ժանդախտը առեան հիւանդութիւն է: Միկրօբները մտնում են արեան մէջ և վարակելով այն, առաջ են բերում բոլոր լորձաթաղանթների ծանր բորբոքում: Լորձաթաղանթները հաստանում են, ուռչում և ժամանակի ընթացքում ստացւում են նրանց վրայ մի շարք վէրքեր: Մի առժամանակ մարմնի մէջ պատրաստւում է մի տեսակ ծանր թոյն, որ թունաւորելով կենդանու արիւնը, մահան է դառնում:

Վարակելու բոլորից մինչև հիւանդութեան երեան գալը անցնում է 3—6 օր: Անասունի ջնրմութիւնը յանկարծ, մի օրւայ ընթացքում, հասնում է մինչև 42 աստիճանի և այդպէս մընում 2—3 օր: Անասունը շատ ընկճւած դրութեան մէջ է, առաջ է գալիս անյագում ծարաւ, ականջները կայս ան տւած, ո՛

րոճումը դադարում է, լորձաթաղանթները կարմրում են և ըսկւում է դող. միևնոյն ժամանակ նկատւում է փորկապութիւն. կաթի քանակը նկատելի կերպով պակասում է (սովորականի կէսը), մէջը բոււում է. անասունը հազիւ բռնւում է ոտների վրայ երբոււում է, կռակը ծուծ է: Այդպէս շարունակւում է 1—2 օր: Ապա երևան է գալիս լորձաթաղանթների կարմրելը, որ մանաւանդ պարզ նկատելի է դառնում յետերքի, շրթթունքների վրայ և լիզի տակը (պուտ-պուտ կարմիր բծեր):

Սկզբում այդ բծերը շատ փոքրիկ ու աննշան են, սակայն կամաց-կամաց տարածւում, մեծանում են, երևան են գալիս նաև ձերմակ բծեր և կարճ ժամանակայ ընթացքում լորձաթաղանթները ծածկւում են մուգ-կարմիր գոյնի վէրքերի նման պոյտերով: Բացի դրանցից նկատելի է դառնում արագ շնչառութիւնը և բերանից հոսող հոտած լորձոնքը: Աչքերից նոյնպէս հոսում է նախ ջրալի, ձերմակ և ապա՝ դեղնաւուն, թարախանման հեղուկ: Այդ դրութիւնը տեսնում է առնւազն 2—3 օր և ապա սկսւում է սարսափելի, անընդգծադրելի փորլուծութիւն, որից անասունը լիովին հիւժոււում, ուժասպառ է դառնում և նկատելի կերպով մի օրւայ ընթացքում լզարում և մաշւում: Այդ ժամանակ արդէն վէրքեր կազմւում են նաև շնչառական գործարանների լորձաթաղանթ վրայ: հիւանդը սկսում է ստէպ-ստէպ հագալ: Զուգընթացաբար փորլուծութեան հետ ջերմութիւնը նկատելի չափերով պակասում է: Դրանից յետոյ պէտք է սպասել, որ հիւանդը կամ կըստակի կամ կառողջանայ, վերջինս՝ շատ սակաւ. 100-ից ասողջանում են 5—10:

Սրանք են իսկական ժանդախտի գլխաւոր և ընդորշ նշանները. սակայն երբեմն ժանդախտը ընդունւում է և այլ կերպարանք. կայ այսպէս կոչւած թոքային ժանդախտ, եթէ հիւանդութիւնը կենտրոնանում է գլխաւորապէս և նոյն իսկ բացառապէս թոքերի մէջ. կայ ջղային ժանդախտ, երբ հիւանդ անասունը յիշեցնում է կատաղած կենդանի, կայ, վերջապէս, կաշւի ժանդախտ՝ երբ բծերը և ապա վէրքերը նկատւում են միայն կաշւի վրայ: Սակայն սրանք բոլոր բացառութիւններ են, իսկ բուն ժանդախտի իսկական, բնորոշ նշանները վերոյիշեալներն են:

Ժանդախտով աւելի յաճախ հիւանդանում են և աւելի շատ ստտկում կուլտուրական, ընտիր տեսակի անասունները. կովկա-

սում աւելի յաճախ ժանդախտով հիւանդանում են լեռնային անասունները, այն ինչ թաթարական կովերը և ոչխարները սակաւ:

Ժանդախտից զերծ չի մնում անասունի ոչ մի ներքին օրգանը և բոլոր լորձաթաղանթների վրայ, սկսած շրթունքից մինչև ուղիղ աղիքը, նկատելի է լինում այդ անողոք ախտի աւերիչ գործունէութիւնը:

Մի անգամ ժանդախտով հիւանդացած և առողջացած անասունը երբէք կարող չէ կրկին հիւանդանալ և այդ պատճառով ժանդախտի դէմ կուելու ամենալաւ, միակ և ամենաարմատական միջոցն է պատուաստելը: Այդ է պատճառը, որ անասնաբոյժերը ամենահին ժամանակներից ոչ մի ջանք ինչպէս չեն գտնելու ամենաընտիր և ազդեցիկ պատուաստելու միջոցները և այժմ, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ Ռուսաստանում, ժանդախտի դէմ անասուններին պատուաստելը լիովին ընդունւած և ընտիր միջոցն է այդ պատուհասի դէմ կուելու համար:

Եղջիւրաւոր անասունների ժանդախտով վարակւած բոլոր անասունները պէտք է անպայման և անյապաղ սպանեն, իսկ տաւարի կամ շրջանի դեռ ևս առողջ անասունները անպայման պէտք է պատուաստեն:

Անդրկովկասում, ուր այսօր գլխաւորապէս մնացել է ժանդախտը, կան անասնաբուժական առանձնայատուկ հիմնարկութիւններ, որոնց միակ և գլխաւոր նպատակն է՝ գիտութեան վերջին խօսքին համաձայն, կուել երկրի տնտեսական բարօրութեան և գիւղացիութեան բարեկեցութեան այդ ոխերիմ և անողոք թըշնամու դէմ:

Ինչպէս արդէն մի անգամ ասացի, ժանդախտը համարեա անբուժելի մի ախտ է և միևնոյն ժամանակ սարսափելի վարակիչ մի հիւանդ անասունը, եթէ անուշադիր թողնեն, կարող է վարակել ոչ միայն նոյն անասնատիրոջ տուարը և քարուքանդ անել նրա առանց այն էլ սողքատ ու փոքրիկ գիւղական տնտեսութիւնը, այլ և առաջ բերել համաճարակ ամբողջ շրջանում, համայն նահանգում: Այդ է պատճառը, որ ռուսական օրէնքը պահանջում է՝ բոլոր ակներև հիւանդ և խիստ կասկածելի անասուններին անյապաղ սպանել, իսկ միւսներին՝ պատուաստել: Այդ օրէնքը պէտք է լաւ ըմբռնի և միշտ յիշէ գիւղացին, որովհետև

դրանումն է անասունների այդ ծանր ախտից վերջնականապէս ազատելու միակ լուրջ գրաւականը: Գծբախտաբար, մեղսնում դեռևս լուրջ և գիտական բժշկութիւնը նոր-նոր սկսում է ամուր և հաստատուն հիմքեր գցել հասարակ ժողովրդի և մասնաւոր գիւղացիութեան լայն խաւերում, էլ ուր մնաց կանոնաւոր ու լուրջ անասնաբուժութիւնը, որի ընդդէմ երբեմն դուրս է գալիս անօտրիապաշտութիւնների թմանք խաւարը: Ահա այստեղ գիւղական անձնէք գործիչների համար բացում է հանրօգուտ գործունէութեան լայն սպարէզ:

Մինչև այսօր էլ Անդրկովկասում եղջիւրաւոր անասունների ժանդախտը տանում է իւրաքանչիւր տարի հարիւրաւոր զոհեր և քարուքանդ անում տասնեակ տնտեսութիւններ. ոչէտք է պատուել գիւղերում դարերից ի վեր հաստատւած խաւար և հասկացնել, գիւղացուն, որ պատուաստել անասունը ժանդախտի կամ մի այլ ախտի դէմ նոյնքան կարեւոր է իւր իսկ կենսական շահերի տեսակէտից, որքան և անհրաժեշտ է ծաղիկը պատուաստել իւր երեխաներին:

Ուրեմն՝ ժանդախտով հիւանդ անասունը պէտք է անպայման սպանել. սպանւածի դիակը (լէշը) անհրաժեշտ է թաղել, իսկ որպէսզի ոչ ոք չը գայթակղուի նրա կաշուով և գրանով պատճառ չը դառնայ համաճարակը տարածելուն, անհրաժեշտ է սպանած անասնի կաշին նախօրօք փչացնել, — կտրատել կամ, որ աւելի յարմար է, այրել: Ժանդախտը երևան կկած գիւղից կամ շրջանից կարելի չէ ուրիշ տեղեր արտահանել յարդ, խոտ, բուրդ, կաթ և այլն, որովհետև այդ բոլորը կարող են ուրիշ տեղ համաճարակ առաջ բերել:

Այսպիսով՝ մի կողմից հիւանդներին սպանելով և միւսներին պատուաստելով, միւս կողմից մի շարք սանիտարական պայմանները խօտիւ և նոյնութեամբ կատարելով կարելի է կուել անասունների այդ ծանր ախտի դէմ և մի անգամ ընդ միշտ ազատել երկրի տնտեսական բարեկեցութիւնը այդ ահուկի պատուհասից:

Այդ միջոցներով ազատել է ժանդախտից Արևմտեան Եւրոպան, այդ միջոցներով սրանից մի երկու տասնեակ տարի առաջ ազատեց եւրոպական Ռուսաստանը և, անկասած, դրանց օգնութեամբ շուտով կազատուին այդ ծանր ախտից նաև Անդրկովկասը, Միբրը և Թուրքաստանը:

Եղջիւրաւոր անասունների ժանդախտը վարակիչ է նաև ուղտի, եղջերուի և այլ մի քանի կենդանիների համար: Միասնակ անասուններ (ծին, էշը), մսակերները (չուռ, կառու և այլն), ինչպէս և մարդը այդ հիւանդութիւնից իսպառ ապահովւած են:

ՏՈՒՔԵՐԿՈՒԼԵՑ (բարակացաւ).

(Туберкулезъ.—Tuberculosis).

Տուբերկուլեզ կամ բարակացաւ կոչւած ու վարակիչ հիւանդութիւնը մեր խօսակցական լեզուի մէջ յաճախ ընդունուում է իբրև հոմանիշ թոքախտ հիւանդութեանը. սակայն, դա սխալ գործածութիւն է, որովհետև թոքախտը տուբերկուլեզ աւանդ հիւանդութեան միայն մէկ ձևն է, մասնաւոր արտայայտութիւնը, երբ ախտը թոյն է դնում գլխաւորապէս և նոյն իսկ առանձնապէս թոքերի մէջ և փշացնում, մաշում և հիւծում այդ անհրաժեշտ և նշանակալից օրգանը. այն ինչ տուբերկուլեզ կոչւած հիւանդութիւնը կարող է, բացի թոքերից, վարակել ուրիշ ներքին գործարաններ և անգամ ոսկրի ուղիղը. մարդկանց մէջ մենք տեսնում ենք աւելի յաճախ թոքերի տուբերկուլեզ և դրա համար էլ մեղանում թոքախտը բառով սովորել են բնորոշել այդ լուրջ ու ծանր հիւանդութիւնը: Կենդանիների մէջ տուբերկուլեզը իշխում է իր բոլոր տեսակներով ու ձևերով և թոքախտը նոյնքան տարածւած է, որքան և մարտդական գործարանների տուբերկուլեզը և այլն: Ահա ինչու ես անյարմար եմ դատում գործածել այդչափ տարածւած թոքախտ խօսքը և խօսում եմ տուբերկուլեզ ախտի մասին: Ըստ իս շատ նպատակայարմար և ճիշտ կը լինի անւանել այդ ախտը-բարակացաւ կամ, որ աւելի մօտ է ռուսաց ЧАХОТКА բառին, հիւծախտ (ЧАХУТЬ-հիւծել):

Տուբերկուլեզ հիւանդութիւնը (մասնաւորապէս թոքերի հիւծախտը) այնչափ մեծ չափերով և ամենահին ժամանակներից տարածւած է մարդկանց մէջ և համայն աշխարհում իւրաքանչիւր տարի այնչափ դոճեր է կլանում, որ իրաւամբ ստացել է «մարդկութեան թշնամի» կոչումը և իր վերայ բեկեռել թէ գիտութեան, թէ հասարակական ամենալայն խաւերի և թէ կառավարչական մարմինների ամենալուրջ ուշադրութիւնը և դարձել համայն կուլտուրական մարդկութեան մտազբաղութեան և մտահոգութեան

առարկայ: Ռուսաստանում, այս վերջին տարիները, ահագին գումարներ են ծախուում և ամեն ջանք գործ է դրում այդ հոգեկր ախտի դէմ կուելու համար. իբրև պերճախօս, ապացոյց այդ նշանակալից և ուրախալի երևոյթի, յիշենք թէկուզ սպիտակ ծաղիկ տօները, որ վերջին տարիներս այնքան սովորական երևոյթ դարձան համայն լայնատարած Ռուսաստանի համար, սկսած մայրաքաղաքից մինչև ծայրագաւառների նոյն իսկ ամենախուլ անկիւնները:

Պակաս աւերիչ դեր չի կատարում այդ ծանր և վերին աստիճանի վարակիչ ախտը նաև ընտանի կենդանիների մէջ, բաւական է նկատել, որ համարեա բոլոր ընտանի անասունները վարակուում են նրանով. սակայն գլխաւորապէս տուբերկուլեզը տարածւած է եղջիւրաւոր անասունների և մանւաւանդ կովերի մէջ: Աւելորդ չեմ համարում առաջ բերել մի քանի հետաքրքիր վիճակագրական տեղեկութիւններ, որպէս զի ընթերցողը հասկանայ թէ որքան փլաս է հասցնում այդ հիւանդութիւնը թէ առհասարակ զիւղատնտեսութեանը և թէ մանւաւանդ կաթնատնտեսութեանը, որովհետև հիւծախտով վարակելու չափազանց տրամադիր են կաթնատու կովերը: Միայն 1897 թ. Ռուսաստանում այդ ախտից սատկել են մօտ 23,000 կով: Այդպիսի թուերի պատահում ենք մենք յաճախ և միայն վերջին տարիներս, շնորհիւ մի շարք անասնաբուժական-առողջապահական պայմանների բարելաման, այդ թւերը նկատելի չափերով պակասում են:

Ինչպէս արդէն ասացի, հիւծախտով հիւանդանալու հնարաւորութիւնից ապահովւած չէ ոչ մի տեսակի կենդանի և նրանցից իւրաքանչիւրը ունի իւր բնորոշ ձևը: Այսպէս՝ եղջիւրաւոր անասունները հիւանդանում են գլխաւորապէս թոքերի և ապա թոքերի ու ստամոքսի նրբաթաղանթի (плевра и брюшина) տուբերկուլեզով, խոզերը՝ մարտդական գործարանների, ձին և շունը՝ թոքերի, թռչունները՝ լեարդի, փայծաղի և աղիքների:

Բայց, ամենից յաճախ հիւանդանում են եղջիւրաւոր անասունները և մանւաւանդ կովը:

Տուբերկուլեզը առաջ է գալիս, ինչպէս առհասարակ բոլոր վարակիչ ախտերը, առանձնայատուկ միկրօբից, որը մանկելով մարմնի մէջ և պատահելով այնտեղ նպատակայարմար պայմանների, դարգանում է, բազմանում և իւր ազդեցութեամբ ու գործունէութեամբ հիւծում, քանդում և լիովին փշացնում կենդանու

մա բնի, այն գործարանը, որ նա ընտրել է իրան բնակատեղի: Այդ հիւանդութեան ամենաբնորոշ յատկանիշներն են՝ երկար շարք հանգոյցներ, որոնք ժամանակի ընթացքում կազմուում են վարակած գործարանի մէջ: Ինչպէս արդէն ասացի, այդ գործարանն է, զլիսաւորապէս, թոքերը, սակայն յաճախ հիւծախտը բոյն է դնում նաև աղիքների, լեարդի, փայծաղի, ոսկրի ծուծի և այլ մասերի մէջ:

Հետաքրքիր է նկատել, որ միջին դարերում, եւր բժշկական գիտութիւնը դեռ ևս նոր էր սկսում ծաղկել, շատերը ենթադրում էին, որ անասունների թոքախտը առաջ է գալիս սոփոմիականութիւնից (СРОТОПОЖЕСТВО) և որ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդու սիֆիլիսը (վատ ցաւ), անցած անասնին: Սակայն այդ սնտի հաստալիքը յօդս ցնդեց գիտութեան բարգաւաճման հէնց առաջին քայլերին: Հիւծախտը առաջ բերող միկրօրը առաջին անգամ երևան հանեց հոչակաւոր գերմանական գիւնական, բժիշկ Կօխը, որի անունով և մինչև այսօր կոչւում է այն:

Երկրագնդի վերայ կան մի քանի տեղեր, ուր հիւծախտը չափազանց հազուադիւր երևոյթ է:—մի քանի հիւսիսային երկիրներ, Ճապոնիա, Շվեդիա, Նորվեգիա, Հիւսիսային Ամերիկա, Միջին Աֆրիկա և այլն: Չափազանց տարածւած է այդ հիւանդութիւնը մեծ քաղաքներում, ուր բնակչութիւնը շատ խիտ է. նոյնը նկատուում է նաև անասունների վերաբերմամբ. բացատրւում է այդ երևոյթը նրանով, որ մեծ և բազմամարդ քաղաքներում գտնուում են շատ կաթնատնտեսական ֆիրմաներ, որոնց մէջ համախմբւած են լինում հազարից քանակութեամբ կաթնատու կովեր, որ, ինչպէս ասացինք, չափազանց տրամադիր են այդ ախտով վարակելու:

Այն ինչ աւելի կոպիտ տեսակի (զուտ բանւորական) կովերը և եզները սակաւ են հիւանդանում հիւծախտով: Ապա ի՞նչով բացատրել այն հանգամանքը, որ կաթնատու տեսակի կովերը այդչափ յաճախ վարակուում են տուբերկուլիօզով, չնայած այն հանգամանքին, որ նրանց կենցաղը շատ աւելի քնքոյշ և շատ յարմար է, քան միւս անասունների: Բացատրւում է այդ, առաջին հոյեացքից կարծես տարօրինակ երևոյթը, հէնց այդ կենցաղի յարմարութեամբ. կաթնատու տեսակի կովերը ապրում են զլիսաւորապէս փակ բնակարաններում, վարում են խաղաղ և

քնքոյշ կեանք, իսկ այդ բոլորը անխուսափելիօրէն նպաստում է նրանց օրգանիզմի թուլանալուն, քնքշանալուն և հիւանդութիւնների տրամադիր դառնալուն: Այդ տեսակէտից մեծ նշանակութիւն ունի նաև չափազանցրած կաթնատուութիւնը, որ նոյնպէս հազարից չափերով նպաստում է կենդանու թուլանալուն: Ուրեմն, այստեղ մենք նկատում ենք նոյն երևոյթը, ինչ և մարդկային կեանքում: Ինչպէս որ թոքախտով աւելի յաճախ և աւելի մեծ չափերով հիւանդանում են փակ կեանք վարող, մեծ և աղմկալից քաղաքում ապրող և նրա հեղձուցիչ մթնոլորտը ծծող մարդիկ, քան թէ բնութեան ծոցում ապրող, մաքուր և ջինջ օդ ծծող ու ֆիզիկական աշխատանքով զբաղուող գիւղացին կամ լեռնացին, այնպէս էլ անասունների հիւծախտով աւելի յաճախ և աւելի հեշտութեամբ վարակուում են փակ և քնքոյշ կենցաղ ունեցող կաթնատու կովերը, քան թէ, դիցուք, օրն ի բուն գիւղացու հետ հողագործական աշխատանքով զբաղւած և համարեա ամբողջ օրը բաց օդում անցկացնող բանւոր եղը: Դա բնական է և հասկանալի:

Ես արդէն ասացի, որ տուբերկուլիօզը հաւասարապէս կը պչում է թէ մարդկանց, թէ այլ և այլ տեսակի ընտանի կենդանիներին և թէ թռչուններին. Հարց է ծագում. արդե՞ծք այդ բոլոր տեսակի հիւծախտը առաջ է գալիս միևնոյն գրգիռից, միկրօրից: Գիտութիւնը այս հետաքրքրական հարցին վճռականապէս տալիս է բացասական պատասխան:

Կան երեք տեսակի, երեք տիպի տուբերկուլիօզային բացիւններ՝ 1. մարդու՝ (Typus humanus), 2. կովի (t. bovinus) և 3. թռչունների կամ հաւի (t. gallinarum): Առաջինը վարակում է՝ մարդկանց, կապիկներին, շանը և կատին. երկրորդը՝ եղջիւրաւոր անասուններին և երրորդը՝ թռչուններին: Հարց է բարձրանում՝ արդե՞ծք կարող չէն այդ այլազան գրգիռները առաջ բերել հիւծախտ ուրիշ, իրենց անհամապատասխան կենդանիների մէջ և, երկրորդ՝ արդե՞ծք կարող չէ մէկ կենդանին (օրինակ կովից) վարակել ուրիշ կենդանու (օրինակ թռչունի) հիւծախտով: Սկզբում կարծում էին, որ այդ երեք տեսակները զուտ տիպիկական են և վերոյիշեալ երկու հարցերին պատասխանում էին բացասաբար: Սակայն, տասնեակ տարիների ընթացքում մի շարք գիտական փորձեր, հետազօտութիւններ ու դիտողութիւններ ցոյց տւին,

որ այդ կարծիքը սխալ է և որ այդ զանազան տեսակի դրդիչ ներք յաճախ կարող են փոխանակել: Այսպէս օրինակ, մի շարք գիտնականներ յաջողեց պարզել, որ մարդ կարող է վարակել կովից, մանուսանդ կաթի, իւղի և այլ կաթնային պիտոյքների միջոցով, մանաւանդ հեշտութեամբ վարակուում են տուրբիկուլէզով հիւանդ կովի կաթից երեխաները:

Ինչպէս արդէն ասացի, տուրբիկուլէզը բաժանուում է դանազան տեսակների ըստ այն գործարանների կամ մարմնի այն մասերի, որոնք վարակած են և ուր հիմք է դրած ախտը: Ասացի նաև, որ ընտանի կենդանիներից այդ ախտով հիւանդանում են գլխաւորապէս եղջիւրաւոր անասունները և, նամանաւանդ կաթնատու տեսակի կովերը, որոնց մէջ յաճախ այդ ախտը առաջ է բերում նոյն խակ համաճարակներ, ինչպէս մենք ամենից յաճախ պատահում ենք թղթերի հիւժախտ կամ այսպէս կոչւած թոքախտ. սակայն հազւապիւտ չին նաև մարսողական օրգանների և մանաւանդ աղիքների հիւժախտը. տարածւած է նաև փորի նրբաթաղանթի (брюшина) տուրբիկուլէզը, որ կոչւում է նաև աղամանդեայ հիւանդութիւն (жемчужная болѣзнь):

Վարակելու կամ առհասարակ հիւանդանալու միջոցները շատ բազմատեսակ են. ախտի դրդիչները կարող են անցնել կաշուից, շնչառութեան շնորհիւ և սնունդի հետ, մանաւանդ նշանակալից են վերջին երկու դէպքերը: Փորձերը ցոյց են տալիս, որ շնչառութեան շնորհիւ վարակելը մանաւանդ հեշտ է խոնաօդի մէջ: Աղիքների տուրբիկուլէզով վարակելու շատ տրամադիր են ջահել կենդանիները, բացատրուում է դա կաթի ազդեցութեամբ:

Ժառանգականութիւնը այնքան էլ մեծ դեր չի կատարում, որովհետև վարակածները աւելի յաճախ մեւնում են դեռ ևս մօրը արգանդում կամ ծնելուց յետոյ շուտով: Կովերի հետ համեմատած, սակաւ են հիւանդանում հիւժախտով ոչխարները և, մանաւանդ, այծերը: Կէնց այդ պատճառով բժիշկները յաճախ խոր հուրդ են տալիս գործածել այծի կաթ: Սողը, ձին, շունը և կատուն նոյնպէս կովերից պակաս են հիւանդանում: Կովերից ևս աւելի տրամադիր են հիւանդանալու դաշտային տեսակները, քան լեռնային: Ինչպէս արդէն ասացինք, չափազանց վարակիչ են կաթնատու տեսակի կովերը, ապա՝ բանւոր և ամենաքիչը

մսային: Աւելի յաճախ հիւանդանում են կովերը, քան թէ եղնեքը: Հիւանդանալուն նպաստում են բացի վերոյիշեալ կենցաղավորական պայմաններից, խոնաւութիւնը, ցուրտը, մրսելը, թոքերի կամ աղիքների բորբոքումը և այլն:

Որո՞նք են տուրբիկուլէզի համար ընտրոշ երեոյթները: Տուրբիկուլէզը սուր կերպարանք ունեցող ախտ է: Նա անցնում է դանդաղ, ունի բաւականի երկարատեւ ընթացք և դրա համար էլ յաճախ անկարելի է որոշել նրա սկիզբը: Վարակելուց միայն 2—3 շաբաթ յետոյ կարելի է նկատել մի քանի կասկածելի նշաններ՝ կենդանին շուտ շուտ յոգնում է, կորցնում է իւր նախկին աշխոյժը, ջերմութիւնը ժամանակ առժամանակ սաստկանում է:

Երբ հիւանդութիւնը արդէն հիմնաւորւում է մարմնի որ և է մասում, ջերմութիւնը դարձեալ անցնում է սովորական չափերին և միայն նորանոր հիւժախտային կէտեր կամ հանգոյցներ կազմելիս, դարձեալ բարձրանում է: Հիւանդութեան վերջերին միայն ջերմութիւնը հասնում է 40°: Թոքախտի ժամանակ նկատուում է խանգարած շնչառութիւն (одышка), հազ, որը մանաւանդ ուժեղանում է սառը ջուր խմելիս: Այս բոլոր երեոյթների հետ միևնոյն ժամանակ նկատուում է, որ կենդանին օրէցօր նիհարում է, լգարում և հիւժուում: Չափազանց դժւար է ընտրոշել աղիքների և այլ ներքին գործարանների հիւժախտը, որովհետև ոչ մի քիչ շատ բնորոշ և աչքի ընկնող երեոյթ չի կարելի նկատել: Աղիքների հիւժախտի ժամանակ մարսողութիւնը, բնականաբար, խանգարում է՝ փորկապութիւնը և փորլուծութիւնը համարեա պարբերաբար յաջորդում են իրար: Երբեմն հիւժախտը կենդանաւում է գլխաւորապէս ստիքների և այն էլ նրանց յետևի քառորդի վրայ՝ պարզ շօշափում են բաւականի մեծ չափերով գունտեր ու հանգոյցներ. կաթը ևս նկատելիօրէն փոխում է իւր սովորական յատկութիւնները, դառնալով՝ սկզբում՝ պինդ և ապա՝ չափազանց ջրալի:

Չահել անասունների մօտ հիւժախտը աւելի սուր կերպարանք է ստանում և բաւականին արագ ընթացքով տանում հիւանդին դէպի մահ: Առհասարակ կովերի համար տուրբիկուլէզը իւր բոլոր ձևերով և, մանաւանդ, թոքախտը ու աղիքների հիւժախտը մի չափազանց ծանր և լուրջ հիւանդութիւն է, որը

շատ սակաւ հնարաւոր է դարձնում առողջանալը: Կարելի է ասել, որ եղջիւրաւոր անասունների, գլխաւորապէս կովերի և մանաւանդ կաթնատու տեսակի կովերի հիւժախտը անբուժելի է:

Վերև յիշածս տուբերկուլէօզի արտաքին, աչքի ընկնող նըշանները, ինչպէս տեսնում է ընթերցողը, այնչափ անորոշ են և կասկածելի, որ ըստ նրանց հազիւ թէ հնարաւոր լինի, նոյն իսկ փորձաւոր և բանիմաց անհատի համար, վճռականապէս որոշել թէ այս կամ այն անասունը իրաւամբ հիւանդ է հիւժախտով: Ինչպէս բոլոր երկարատև և քրօնիկական ախտերը, տուբերկուլէօզը ևս չէ տալիս իւր ներկայութեան այնչափ պարզ, ակներև ու բացայայտ արտաքին ապացոյցներ, որոնց վրայ հիմնելով հնարաւոր լինի առանց կասկածի բնորոշել հիւանդութեան էութիւնը: Յիշածս հիւժելը, յոգնածութիւնը, հազը, մարսողութեան և շնչառութեան խանգարումը յաճախ պատահում են և այլ, իր բեմն նոյնիսկ շատ թեթև ու աննշան հիւանդութիւններէ համար և չեն կազմում լոկ թոքախտի կամ աղիքների տուբերկուլէօզի համար բնորոշ երևոյթներ. այդ նշանների ու երևոյթների վրայ լոկ հիմնած եզրակացութիւնը միշտ կը լինի մօտաւոր, ենթադրական և կասկածելի: Այս նշանակալից հանգամանքը ստիպել է գիտութեան և բժշկութեան մշակներին շատ ջանք ու եռանդ գործ դրել ճարելու համար մի հնար, մի միջոց, որ կարելի լինի վրձնականապէս և առանց տարակուսանքի բնորոշել հիւժախտը: Այդ նպատակին այսօր ծառայում են երկու միջոց նախ՝ կասկածի տեղիք տւող անասունի թուքի (աւելի ճիշտն ասած բաղամի) աշակուրջ ուսումնասիրութիւնը միկրոսկոպի օգնութեամբ, որ նոյնպէս էրբեմն վերջանում է առանց որևէ որոշ հետևանքի և ապա՝ որ ամենագլխաւորն է, տուբերկուլինիդոցիայ (туберкулинизация), այս վերջինս համապատասխանում է սապի համար գոյութիւն ունեցող մալէինի գործածութեանը և կայանում է նրանում, որ կասկածելի անասնին պատաստում են տուբերկուլին կոչւած պատրաստի միջոցը և ըստ այդ սրակման հետևանքների (գլխաւորապէս ջերմութեան աստիճանների պարբերական բարձրանալուն և իջնելուն) հանգում խորոշ և վճռական եզրակացութեան: Այս բոլորի մասին մանրամասն խօսելը լիովին աւելորդ եմ համարում, որովհետև դա պահանջում է բժշկական որոշ պատրաստութիւն ընթերցողից և, բացի դրանից, կազմում է անաս-

նարոյժի պարտականութիւնը: Փաստը այն է, որ շնորհիւ այդ տուբերկուլինին մասնագէտները այսօր հնարաւորութիւն ունին առանց որ և է դժւարութեան վճռականապէս և առանց տարակուսանքի պատասխանել այն հարցին թէ հիւանդ է արդեօք այս անասունը հիւժախտով, թէ, ոչ: Բացի դրանից, Ռուսաստանի արևմտեան 10 նահանգներում, ըստ պետական օրէնքների, անասնարոյժը իրաւունք ունի կասկածելի տաւարի միջից մէկ անասուն սպանել, որպէսզի նրա ներքին գործարանները ուսումնասիրելով հնարաւոր լինի սրոշել կամ արդեօք տուբերկուլէօզ, թէ ոչ:

Անցնում են ամենագլխաւոր և ամենահետաքրքրական հարցին: Ի՞նչ միջոցներով կուել կենդանիների հիւժախտի դէմ:

Ինչ վերաբերում է տուբերկուլէօզը բժշկելուն, այդ մասին ևս արդէն ակնարկեցի. անասնաբուժական գիտութիւնը, դժբախտաբար, մինչև այսօր էլ անզօր է կռելու այդ ախտի դէմ. դեղ հիւժախտի դէմ չկայ, նա անբուժելի է և ուրեմն ակներև հիւանդ անասնին ամենայնաբարն է սպանելը, որպէսզի նա պատճառ կը զատնայ միւս, հարևան անասունների վարակելուն և համաճարակ առաջ գալուն:

Սակայն, կենդանիների հիւժախտը այնչափ ծանր հիւանդութիւն և անբուժելի լինելով այնչափ ծանր հարւած է հասցնում թէ առանձին անասնատէրերին ու գիւղատնտեսներին. և թէ առհասարակ համայն երկրի տնտեսութեանը. բացի դրանից, նա այնչափ վնասում է մարդկանց՝ կաթի և այլ պիտոյքների շնորհիւ տարածելով վարակումը, որ, անշուշտ, գիտութիւնը պէտք է ջանար գտնել գոնէ միջոցներ նրանից խուսափելու, նրանից փախչելու և զուրանալու համար: Եւ յիշուի, անասնաբուժական առողջապահութիւնը հաստատել է մի շարք կանոններ ու օրէնքներ, որոնց շնորհիւ գոնէ մասամբ հնարաւոր է կուել այդ կործանիչ ախտի դէմ:

Պարզ է և հասկանալի, որ այդ կանոնները վերաբերում են նախ և առաջ անասունի կենցաղի գլխաւոր առողջապահական պայմաններին: Այդ պայմաններն են՝ լաւ (ոչ շատ միօրինակ) սնունդ, գոմի և նրա մէջ գտնւող բոլոր առարկաների ու կահկարասիքի անպայման մաքրութիւն, մաքուր օդ գոմում (օդամաքրիչներ թէկուզ ամենապարզ կազմութեամբ խողովակներ)

ա՛ստուհը չպէտք է փակ, գոմում միշտ փակւած, կեանք անց-
կացնի՝ անհրաժեշտ է բացօդեայ աշխատանք կամ գոնէ զբօսանք
ժամանակ առ ժամանակ: Տուբերկուլէօզով ակններև հիւանդ ա-
նասունների մատաղ սիրունդը ոչ մի դէպքում չպէտք է ծառայէ
խորև տնտեսական շահագործութեան առարկայ (կաթնատու տե-
սակի կովերի մասին է խօսքս): Հիւանդներին անպայման խսկոյն
և կթ հեռացնել միւսներից և առանձին բնակեցնել. նոր ձեռք բե-
րած անասուններին նոյնպէս մի որոշ ժամանակ անհրաժեշտ է
հեռու պահել միւսներից, մինչև որ պարզւի, որ լիովին առողջ է:
Հազարոց, նիհար ու հիւժւած անասուններին անյապաղ ջոկել
առողջներից: Փոքրիկ հորթուկներին կերակրել անպայման առողջ
կովերի կաթով: Կաթը գործածել միայն մինչի 85⁰ եռացնելուց
յետոյ:

Դանիայում, որ տարիներից ի վեր յայտնի է իւր հռչակա-
ւոր կաթնատնտեսութիւններով, այսպէս ևն վարւում՝ բոլոր հոր-
թուկներին, նրանց աշխարհ եկածի հէնց կրկրորդ օրը, բաժանում
են մայրերից և կերակրում միմիայն եփած կաթով. մի քանի
շաբաթից բոլորին փորձում են տուբերկուլինով և բոլոր հիւժախտ
ունեցողներին անյապաղ սպանում և գոմերը հիմնովին մաքրու-
թեան ենթարկում. և այդ փորձերը կատարում են իւրաքանչիւր
2 տարին մի անգամ:

Ահա մօտաւորապէս առողջապահական բոլոր այն պայման-
ները, որոնց միջոցով կարելի է կուել տուբերկուլէօզի դէմ. ի-
հարկէ, սրանք դուցէ ծանր և դժւարին թւան փոքր ու աղքատ
տնտեսութիւնների համար, սակայն, նախ՝ սովորութիւնը մար-
դու երկրորդ բնութիւնն է դառնում և, երկրորդ՝ ընտանի կեն-
դանիների տուբերկուլէօզը այնչափ ծանր ու իւր հետևանքներով
այնչափ լուրջ ախտ է, որ նրա դէմ կուելու համար անհրաժեշտ
է եռանդ ու ցանկութիւն:

Դոյութիւն ունեն նաև հակատուբերկուլէօզիան պատւաստ-
ներ (бывовакцина Беринга и таурошанъ Коха и Шютца), սակայն
նրանք դեռ չափազանց քիչ են գործածւած և հետևանքները կաս-
կածելի են:

Ի վերջոյ՝ երկու խօսք ընտանի թռչունների հիւժախտի մասին:
Այդ ախտը նրանց մէջ բաւականին տարածւած է և յաճախ
պատճառ է դառնում ահադին համաճարակների: Հիւանդանում են

ղլխաւորապէս աղիքների հիւժախտով, հիւանդութիւնը կենդրո-
նանում է փայծաղի և լիւսրդի մէջ: Վարակում են ամեն տեսա-
կի ընտանի թռչունները (հաւ, բադ, հնդկահաւ, սագ և այլն):
Հիւանդացածներին անհրաժեշտ է անյապաղ ոչնչացնել:

Շատ սակաւ հիւանդանում են հիւժախտով ոչխ սրնները ու
այծերը և աւելի ևս սակաւ՝ ձին:

Խոզր աւելի տրամադիր է, քան վերջիններն, հիւանդանում
նա է աղիքային ձևով:

Տուբերկուլէօզով հիւանդ կովերի համար բնորոշ է՝ փայլը
կորցրած և զզգված մազեր, կոշտ, կնճոռո կաշի, լորձաթաղանթ-
ների դժգոյնութիւն, հազ, յոգնածութիւն, լղալուճն, շնչարգե-
լութիւն:



ԹՈՒՔԵՐԻ ՏԱՐԱՓՈՒՍԻԿ ԲՈՐԲՈՔՈՒՄ

(Повальное воспаление легкиъ)

Թոքերի տարափոխիկ բորբոքում կոչւած չափազանց ծանր, խիստ վարակիչ ու ահագին համաճարակների տեղիք տուղ լուրջ հիւանդութեամբ վարակուած են գլխաւորապէս ձին, իսկ եղջիւրաւոր, որոճացող կենդանիներից՝ կովը: Այդ իսկ պատճառով բաժանում եմ այս գլուխը երկու մասի:

Ա. ՁԻՈՒ ԹՈՒՔԵՐԻ ՏԱՐԱՓՈՒՍԻԿ ԲՈՐԲՈՔՈՒՄ ԿԱՄ ՁԻՈՒ ԺԱՆՏԱՆՑ

(Повальное воспление легкиъ лошадей или чума, или инфлюэнца лошадей)

Այս հիւանդութիւնը, որ յաճախ տեղիք է տալիս ահուելի համաճարակների, կայանում է նրանում, որ առաջ է բերում մի կողմից՝ բոլոր լորձաթաղանթների և աչքա՝ թոքերի ծանր և յաճախ արուժեղի բորբոքում: Այդ ախտը, ըստ իւր նշանների և բնորոշ երևոյթների, բաժանւում է երկու ձևի—1. ձիու ժանգախտ կամ ինֆլուէնցա և 2 կրծքի ախտ կամ թոքերի տարափոխիկ բորբոքում (трудная зараза): Առաջինը աւելի թեթեւ է և անցնում է համեմատաբար կարճ ժամանակէջ ընթացքում (3-7 օր), շատ սակաւ վերջանում է մահւամբ. այս հիւանդութեան բնորոշ նշաններն են՝ սաստիկ ջերմ (40—41°). հիւանդը սարսափելի ընկճւած է, ախորժակը լիովին բացակայում է և միևնոյն ժամանակ նկատւում է անյապում ծարաւ, սաստիկ բորբոքում են լորձաթաղանթները (բերանի ներքը կարմիր է, տաք և ուռած), հազում է, առաջ է գալիս հարբուխ, շնչառութիւնը արագ է, մարսողութիւնը լիովին խանգարւած, յաճախ փորլուծութիւն և փորցաւ. Երկրորդ ձևը նոյնպէս բնորոշւում է բոլոր վերոյիշեալ երևոյթներով, սակայն այդ բոլորը աւելի մեծ և նկատելի չափերով. ամենաբնորոշն է թոքերի սաստիկ բորբոքում: Այս ձևը շատ

աւելի ծանր է և յաճախ մահացու. բնորոշ են նաև հետեւեալ երևոյթները՝ սաստիկ թուլութիւն, ախորժակ չկայ, հազ, բերանից անդադար հոսում է թւըը, ջերմութիւնը հասնում է մինչև 41 սաստիճան, շնչառութիւնը դժարանում է. հիւանդը համարեա միշտ ոտքի վրայ է և չի պառկում: Երբեմն թոքելի տարափոխիկ բորբոքումը առաջ է բերում նաև ուրիշ ծանր և լուրջ հիւանդութիւններ՝ աղիքների բորբոքում, երիկամուկների հիւանդութիւն և նոյն իսկ ուղեղի բորբոքում: Այս ախտը չափազանց վարակիչ է և նոյն իսկ արդէն կարծես լիովին առողջացած ձին կարող է վարակել: Վարակումը կատարւում է սնունդի կամ ջրի միջոցով:

Թոքերի տարափոխիկ բորբոքումը Ռուսաստանում չափազանց տարածւած ախտերից է. մասաւանդ յաճախ երևան է գալիս գօրքերում և առհասարակ ամեն տեղ, ուր հաւաքւած են ի մի ձիերի մեծ քանակութիւն:

Ինչպէս կուել այդ ախտի դէմ:

Թէև անասնաբուժութիւնը առաջարկում է մի շարք դեղեր ու միջոցներ թոքերի տարափոխիկ բորբոքման դէմ, սակայն ու գրանք բոլորը երկրորդական նշանակութիւն ունեն և յաճախ ոչ մի ազդեցութիւն և դրական հետեանք չեն ունենում. շատ նպաստակարմար են մի շարք առողջապահական և նախազգուշական պայմաններ ու անհրաժեշտ է հասցնել հիւանդին առաջին օգնութիւնը: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ նախ՝ դեղերը ունեն երկրորդական նշանակութիւն և ապա՝ որ նրանք գտնւում են դեղատներում միայն անասնաբուժի ցուցմունքով, ես աւելորդ եմ համարում խօսել նրանց մասին և անցնում եմ աւելի նշանակալից, հետաքրքրական և անհրաժեշտ միջոցներին, այն է՝ այսպէս կոչւած առաջին օգնութեանը և մի շարք առողջապահական կանոններին ու ցուցմունքներին, որոնց շնորհիւ միայն հնարաւոր է արդիւնաւէտ կուել մղել ձիերի այդ չափազանց ծանր, վարակիչ ու լայնօրէն տարածւած ախտի դէմ:

Առաջին օգնութիւնը, Հէնց որ աչքի են ընկնում որ և է կասկածելի նշաններ, մենք պարտական ենք ամենախիստ և աշաւոր ղ ուշադրութեամբ հետեւել անասունների ն և առաջին իսկ բնորոշ երևոյթը նկատելիս անյապող հիւանդին ապաստել բոլոր աշխատանքներից, ջուրով միւսնելից և սոսկ ձի հիւանդի համար հա-

մապատասխան է ենցադի պատմաններս թոքերի տարափոխիկ բորբորքումը սաստիկ ծանր, հիւժող ախտ է և հիւանդը նոյն իսկ սկզբում ոչ մի դէպքում չպէտք է աշխատէ: Հանգիստ և յառմար կեանք—անա բժշկութեան ամենագլխաւոր և առաջին պայմանները: Ախտը պէտք է լինի անպայման մաքուր՝ անհրաժեշտ է միշտ մաքրել սղբը և յատակը (սոււլէմա 1:1000 կամ կրէօլին 30/0). ախտում պէտք է միշտ մաքուր օդ լինի (օդամաքրիչներ):

Հւանդ ձուռն չ'պէտք է ծածկել: Ահագին նշանակութիւն ունի սնունդը. ես արդէն ասացի, որ թոքերի տարափոխիկ բորբորքումն խոշոր երևոյթներից մէկն է ախորժակի բացակայութիւնը. այդ հանգամանքը անհրաժեշտ է դարձնում, որ մենք հիւանդին առաջարկենք նրա ամենասիրած սնունդը, այսինքն՝ կանաչ արօտ, բողկ, կանեփի քուսպ (Льняные жмыхи) աղով, հաց և այլն. այդ բոլորը անհրաժեշտ է տալ մաքուր, թարմ և փոքր բաժիններով: Ախորժակը բարձրացնելու համար առաջարկում են օրական մի քանի անգամ ողողել հիւանդի բերանը մաքուր, սուր ջրով և սնունդի հետ տալ երբեմն սղային թթու (соляная кислота, 1—2 դրամ): Ամենագլխաւոր պայմաններից մէկն է խայտոզ (горчичники). դա կարելի է կատարել նոյն իսկ առանց բժշկին սպասելու. առնել մի դրածոքայ մանանեխի ալիւր և խառնել տաք ջրով. մինչև որ ստացւի ոչ այնքան պինդ խմոր. այդ խմորը ձեփել կտրճքին երկու կողմերից և մի լաթով կապել. այդպէս կարելի է պահել մինչև 6 ժամ և ապա լանալ: Ջերմի դէմ ոչինչ չեն, տալիս, որովհետև բոլոր այդ օրինակ դեղերը անցնում են անօգուտ, իսկ ջերմը ինքը ևս անցնում է, հէնց որ հիւանդը մի քիչ լաւանայ: Անհրաժեշտ է տալ նաև սրտի գործունէութիւնը ուժեղացնող և կանոնաւորող միջոցներ՝ դինի, արադ, սուրճ և այլն: կան և ուրիշ դեղեր, սակայն այդ բոլորի գործածութիւնը կասուած է հիւանդութեան ընթացքից և անասնաբոյժի բարեհայեցողութիւնից:

Հիւանդութիւնը տևում է 2, ամենաշատը 2 1/2-3 շաբաթ. սակայն, ինչպէս արդէն վերև ասացի, նոյնիսկ կարծես բոլորովին առողջացած անասունը կարող է վարակել, ուստի անհրաժեշտ է առողջանալուց յետոյ ևս ուշադիր և զգոյշ լինել առնւազն մի-երկու ամիս:

Երբեմն այս ծանր ախտը առաջ է բերում կուրութիւն, ուս-

տի բժշկը պէտք է անպայման ուշադրութիւն դարձնի հիւանդի աչքերին և իւր ժամանակին դիմէ համապատասխան դեղերի ու միջոցների:

Վերջին ժամանակներս մի շարք փորձեր են կատարում բժշկելու թոքերի տարափոխիկ բորբորքումը էհրլիսի 606-ով. սակայն հետևանքները դեռ ևս կամ անորոշ են և կամ բացասական:

Բ. ԵՂՋԻՐԱՆՈՐ ԱՆԱՍՈՆՆԵՐԻ ԹՈՔԵՐԻ ՏԱՐԱՓՈՒՄԻ ԲՈՐԲՈՐՈՒՄ

(Говальное восполнение легкихь рогатаго скота)

Եղջիւրաւոր անասուններից թոքերի տարափոխիկ բորբորքում կոչուող չափազանց ծանր ու յաճախ ահագին, լրջնատարած ու բազմադոճ համաճարակների պատճառ դարձող հիւանդութեամբ ամենից յաճախ հիւանդանում են կովը ու եղը և համեմատաբար աւելի սակաւ այծն ու ուղտը: Թոքերի և մարդու հակնդանինքրի, ինչպէս նաև ընտանի թռչունների և մարդու համար կովերի այդ ախտը վարակիչ չէ: Կովերից աւելի յաճախ հիւանդանում են զրանով լաւ, կուլտուրական տեսակի, մանաւանդ զւրիցեական կովերը. չափազանց տարածւած է այդ ախտը նաև Ռուսաստանում և մանաւանդ Սամարայի և Ուրալեան նահանգներում, ուր յաճախ առաջ է բերում չափազանց ծանր համաճարակներ: Վերջին ժամանակներս մի շարք վիճակագրական տեղեկութիւններից և հետազոտութիւններից պարզեց, որ նա գալիս է Չինաստանից և Սիրիոյ վրայից անցնում է Եւրոպական Ռուսաստան: Վիճակագրական ոչ էլ այնքան լրիւ ու բազմակողմանի, տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ համաճարակները իրանց չափերով և ծանր կերպարանքով ահագին հարւած են հասցնում Ռուսաստանի տնտեսականութեանը և նոյնիսկ աւելի ծանր ու բազմազոճ են, քան ժանդախտը: Ռուսաստանի միայն արևմտեան նահանգներում իւրաքանչիւր տարի այդ համաճարակները ոչնչացնում են մօտ 15,000 անասուն: Պարզ է ուրեմն, որ դա Ռուսաստանի տնտեսական բարեկեցութեան գլխաւորագոյն թշնամիներից մէկն է:

Եղջիւրաւոր անասունների թոքերի տարափոխիկ բորբորքումը, անշուշտ, միկրօբային հիւանդութիւն է, այսինքն առաջ է գալիս առանձնայատուկ միկրօբի անասնի մարմնի մէջ մտնելուց և այնտեղ բազմանալով ու աճելով իւր գործունէութեամբ մար-

մնի այս կամ այն անհրաժեշտ գործարանը թունաւորելուց ու փչացնելուց: Թէև դեռ 90 ակուն թւականներին յայտնի Ֆրանսիական գիտնականներ Նոկարը և Ռուև ապացուցեցին այդ փաստը, սակայն զրգիչ միկրօքը այնչափ փոքր է, որ հազիւ յաջողուում է երբեմն ամենաընտիր միկրոսկոպներու օգնութեամբ չափել այն:

Հիւանդութեան զլիւսաւոր էութիւնը կայանում է նրանում, որ այդ աննշան ու փոքրիկ արարածները, այս կամ այն ճանաչարհով ներս խուժելով անասունի մարմնի մէջ կենդրոնանում են զլիւսաւորապէս թոքերում և առաջ բերելով թոքերի ծանր բորքում: հիւժում են այդ անհրաժեշտ ու նշանաւոր գործարանը:

Վերև եւ նկատեցի, որ դա սարսափելի վարակիչ մի ախտ է. վարակել կարելի է թէ անմիջապէս հիւանդ անասնի հետ աննշութիւն ունենալով և թէ շնորհիւ այլ և այլ վարակած իրեղէնների, անունդի և նոյնիսկ հիւանդին խնամող և ոչ ըստ արժանւոյն զգոյշ մարդկանց միջոցով: Հիւանդ անասունը առողջանալուց յետոյ անգամ երկար ժամանակ դեռ ևս կարող է վարակել. նոյնպէս և ախտում կամ դոսում զանազան այլ և այլ ամանները ու իրեղէնները:

Նկատուած է երկար փորձերի շնորհիւ, որ այդ ախտը չափազանց տարածւած է այնպիսի շրջաններում, ուր կան շաքարի և սպիրտի, արագի գործարաններ. այդ կարծես տարօրինակ և օճալին հայեացքից անհիմն իւրացուց երևոյթը հեշտութեամբ բացատրուած է նրանով, որ այդ օրինակ շրջաններում ապրող անասունները միշտ կերակրուում են գործարաններից թափուող անպէտք արգասիքներով, այն է՝ ճակնդեղի քուսուով կամ այլ և այլ բարդաներով, որոնք թուլացնում են մարմնի բնական յատկութիւնը՝ կուել հիւանդութիւնների դէմ և տրամադիր են դարձնում կենդանիներին դէպի այլ և այլ, մասնաւանդ վարակիչ հիւանդութիւններ:

Հիւանդութիւնը շարունակուում է 2—4 շաբաթ և յաճախ վերջանում է մահւամբ. միջին հաշուով 100 հիւանդ անասուններից սատկում են երբեմն 60—70. սակայն այս ծանր հանգամանքը մասամբ մեղմանում է նրանով, որ բոլոր կովերը անպայման տրամադիր չեն վարակելու. կան անասուններ, որ բնաւ չեն վարակում և այդպիսիների թիւը յաճախ հասնում է 20—50% ամեն մի տաւարի մէջ:

Մի անգամ հիւանդացած և առողջացած անասունը էլ վարակելու վտանգից ապահովւած է լի վրէ:

Հիւանդութեան բնորոշ նշաններն են՝ շիրմութիւնը մինչև 40 աստիճանի է հասնում, նկատու է թեթ. յոգնածութիւն և թուլութիւն, քթից հոսում է. այսպէս սովորաբար սկսում է այդ ախտը: Ամենաշատը մի շաբաթից տաքութիւնը հասնում է 41 աստիճանի, հիւանդը սկսում է ստէպ. ստէպ հսգալ (մասնաւանդ սաստկանում է հազը ջուր խմելուց անմիջապէս յետոյ) շնչում է արագ-արագ. հոսում է և՛ քթից, և՛ աչքերից: Հիւանդութիւնը զլիւսաւորապէս զարգանում է ձախ կողքում: Սիրտը օժեղ է գործում, սակայն գորկերակը թոյլ է, նւազ և աննշմար:

Հիւանդութիւնը երբեմն շատ արագ ընթացք է ստանում և իւանդը, 3—4 օրւայ ընթացքում սատկում. սակայն դա հազւադէրեւ երեոյթ է և բացատրուում է նրանով, որ թոքերի բորքումանը միանում է սրտի շապիկի (pericardium) բորքումը. աւելի յաճախ հիւանդութիւնը շարունակուում է մինչև երկու, իսկ երբեմն և 3—4 շաբաթ: Երբեմն պատահում է, որ հիւանդութիւնը անցնում է շատ թեթև և անասունը շուտով առողջանում է. սակայն մի քանի ժամանակից յետոյ դարձեալ կրկնում և այդպէս մի-երկու տարի շարունակ:

Բոլոր վերոյիշեալ բնորոշ երևոյթներից այս հիւանդութեան համար մասնաւանդ բնորոշ է հազը. անասունը շատ է հազում ջուր խմելուց յետոյ, պարկած տեղից վեր կենալու և արօտատեղի դնալիս սկզբում հազը չոր է և ցաւ չի պատճառում հիւանդին, սակայն մի քանի ժամանակից յետոյ նա դառնում է աւելի յաճախակի և ցաւատ: Այսօրինակ հազը չափազանց բնորոշ է կովերի այս ծանր հիւանդութեան համար:

Հիւանդութեան վերջերին անասունը չափազանց լղարում է, հրաժարում կերակրից, չի տալիս կաթ և, եթէ յղի է, սովորաբար գցում է պտուղը (выкидышъ).

Այս հիւանդութեան ժամանակ նկատուող բոլոր արտաքին երևոյթները յաճախ բնորոշ են նաև այլ վարակիչ կամ ոչ վարակիչ ախտերի համար և միայն նրանց վրայ հիմնելով երբեմն նոյնիսկ փորձած մտանազէտները դժարանում են վճռականապէս տեսլ, թէ թոքերի տարափոխիկ բորքում է: Այդ է պատճառը, որ սուսական օրէնքները իրաւունքն են տալիս անասնաբոյժին սպա-

նել հիւանդներից մէկին և դիակի մանրամասն հետազոտութեամբ (գլխաւորապէս թոքերի) վճռել հարցը: Հիւանդոց թեան նկարագիրը, սատկողների համեմատաբար, շատ բարձր տոկոսը (30—60) և համաճարակների չափազանց տարածւած լինելը արդէն ըստ ինքեան պարզում են, որ դա մի շատ ծանր և փաստկար ախտ է: Երբ դէմ ամենախիստ միջոցներով կուելն բախպում մեզ կրկրի տնտեսական բարեկեցութեան պահանջը և գիւղատնտեսութեան ու անասնապահութեան շահերը:

Արգեօք որչափ յաջող է անցնում այդ կռիւը և որոնք են նրա միջոցները:

Իժբախտաբար, այս ծանր ու լուրջ ախտի դէմ ևս անասնաբուժական գիտութիւնը չունի զօրեղ և սղղու միջոցներ ու կարելի է ասել, որ այս ախտը չի բժշկւում: Դուցէ երկար ջանքերից և մի շարք այլազան դեղերի ու միջոցների աշխուրջ, ուշադր գործածութիւնից յետոյ հնարաւոր լինի բժշկել այս ախտը, դուցէ, վերջապէս, ի՞նչը հիւանդը կարողանայ ընդդիմագրել ախտին և որոշ ժամանակից յետոյ առողջանայ, սակայն անասնաբուժական տնտեսական շահերի տեսակէտից դա ոչ մի գրական նշանակութիւն չունի: Անասնաբուժութեան առաջնագոյն նպատակն է՝ ըստ կարելուցն նպաստել թէ առհասարակ համայն կրկրի և թէ մասնաւորապէս, այս կամ այն անասնատիրոջ տնտեսական բարեկեցութեանը: Այս է պատճառը, որ անասնաբուժը միշտ պէտք է ի նկատի ունենայ տնտեսական շահերը և բժշկի միայն այն ախտը, որ չի պահանջի չափազանց ծանր ծախսեր և եթէ պահանջի էլ, կարգաբայնէ այն: Մինչդեռ բժիշկը կուում է միայն մարդկային տանջանքի դէմ և ճգնում մարդուն կորզել անողորմ ահաւան ճանկերից, անասնաբուժը բժշկում է յանուն մարդու շահերին: Դա շատ բնական է, քանի որ անասունը, կենդանին կազմում է մարդու անտեսական բարօրութեան յենարաններից մէկը: Ահա այս հիւանդութիւնը ևս, ինչպէս և շատ ուրիշները, պատկանում են նրանց թւին, որոնց բժշկումը անօրուա է անիմաստ անասնատիրոջ շահերի տեսակէտից և ահա ինչու:

1. Պահանջում է մեծ ծախսեր:

2. Առողջացած անասունները յաճախ լիովին անպէտք են դառնում շահագործութեան համար և միշտ սրամագիւր և յիշեալ ախտով հիւանդանալու և

3. Ոչ միայն հիւանդ, այլ և առողջացած անասունները կարող են դեռ ևս կրկար ժամանակ վարակել ուրիշներին:

Այս է պատճառը, որ խորհուրդ է տրոււմ ոչ միայն ակներև հիւանդ, այլ և շատ կասկածելի անասուններին սպանել:

Այդ ինչպէս կուել նոր համաճարակների հնարաւորութեան դէմ:

Անհրաժեշտ է գոմը հիմնովին մաքրութեան ենթարկել: Նոյնը և գոմում գտնուող ու առհասարակ հիւանդ անասունի հետ այս կամ աննչութիւնը ունեցած բոլոր իրեղէնները:

Աղբը ամենայրօքարն է այրել: Ոմանք նոյն իսկ խորհուրդ են տալիս հիւանդութիւն տեղի ունեցած գոմը չը գործածել 1—1½ տարի:

Հիւանդ անասունի կաթը անպայման գործածելուց առաջ եփել:

Միսը կարելի է գործածել, որովհետև վարակիչ չէ: Այս հիւանդութիւնից անասուններին ապահովելու համար կան նաև պատուաստներ:

Վարչապալայի շրջանում, ինչպէս նաև Սիբիրի մի քանի հասանգհերում, ընդունւած է հետևեալ կանոնը՝ բոլոր տկներև հիւանդ ու կասկածելի (Չերմոս) անասուններին սպանել, իսկ մնացեալներին պատուաստել:

Շնորհիւ այդ միջոցներին այս ծանր ախտը այսօր բոլորովին վանւած է Արևմտեան Աւստրալիայի շատ կրկրներից և պէտք է յուսալ, կը վանւի նաև Ռուսաստանից:

7.

ՉԻՈՒ ԱՐԻԻՆԱ-ՖՆԱԿՈՐ ԱԽՏԸ

(Петехиальный тифъ лошадей. Torbus maculosus)

Այս, համեմատաբար շատ քիչ ուսումնասիրւած և մինչև այսօր զանազան, տարրեր կարծիքների ու ենթադրութիւնների նիւթ ծառայող, բաւականին ծանր հիւանդութեամբ վարակուած են համարեա բացառապէս ձիերը: Առաջ կարծուած էին, որ սա համապատասխանում է մարդու տիֆ կոչւած հիւանդութեանը, սակայն յետագայ ուսումնասիրութիւնները ժխտեցին այդ կարծիքը: Պատճառը յայտնի չէ: Յաճախ նա երևան է գալիս մի քանի ուրիշ հիւանդութիւններից յետոյ: Սակայն հիւանդանում են հղջիւրաւոր անասունները և շունը: Մահւան դէպքերը շատ են մօտ 500/0: Հիւանդութիւնը բացատրում են նրանով, որ մի ինչ որ, դեռ ևս անծանօթ, անյայտ թոյն, մտնելով արեան մէջ, խանգարում է արեան կանոնաւոր շրջանառութիւնը և թունաւորում կենդանու օրգանիզմը:

Այս հիւանդութիւնը շատ սակաւ առաջ է բերում փոքրիկ համաճարակներ և նոյնիսկ կան մասնազէտներ, որոնք հաշոււմ են այս ախտը ոչ վարակիչ:

Հիւանդութեան բնորոշ նշանները են՝ սկզբում բոլոր տեսանելի լորձաթաղանթների վրայ երևան են գալիս փոքրիկ, կարմրագոյն բծեր, որ ժամանակի ընթացքում, զարգանալով ու տարածելով, միանում են իրարու և կազմում ընդհանուր, մեծ և տարածւած պոչտեր. մի քանի օրից ոտների և փորի վրայ կազմոււմ են ուռեցքներ. ուռչում է նաև երեսը. այդ ուռեցքները սառն են և յաճախ նրանց ձեղքերից հոսում է հեղուկ: Այդ ուռեցքները չափազանց վտանգաւոր են քթի մէջ, որովհետև ծածկում են անցքերը և առաջացնում շնչարգելութիւն: Ուռեցքներ լինում են նաև կոկորդի և շնչափողի (гортань) մէջ: Հիւանդութիւնը շարունակւում է թեթև դէպքերում 1 շաբաթ, իսկ երբեմն մինչև 2—3 շաբաթ. Զերմութիւնը հիւանդութեան սկզբում հաս-

նում է 39,5 աստիճանի, յետոյ իջնում է մինչև 39,2—39,3 և այդպէս շարունակւում մինչև վերջին օրերը, երբ բարձրանում է մինչև 41—42 աստիճան: Երբ կոկորդում ուռեցքները սաստիկ զարգանում են և հիւանդը զրկւում է կուլ տալու հնարաւորութիւնից—առողջանալու յոյսը աննշան է: 100-ից սատկում են մօտ 50.

Ամենազլխաւոր, բնորոշ նշաններն են՝ բծերը և ուռեցքները: Ինչպէս բժշկել:

Ռիոյ, այս ախտի համար առանձնայատուկ, բժշկական միջոց չկայ, անհրաժեշտ է բժշկել արտայայտող երևոյթներին համաձայն դեղեր նշանակելով. աղիքները մաքրելու համար առաջարկւում են՝ կարլսբադի աղ, կալօմէլ (каломель) և այլն. ուռեցքները կարելի է կտրել, մէջը սրսկել մաքրող դեղով: Եթէ հիւանդին սպառնում է շնչարգելութիւն, անհրաժեշտ է անյապաղ դիմել բժշկի, որ կատարէ համապատասխան անդամահատութիւն (трахеотомия):

Շատ ծանր դէպքերում ոմանք դիմում են արիւն առնելու միջոցին (кровопускание):

Հիւանդ կենդանին պէտք է անպայման գտնել յարմար և առողջապահական պայմաններում. մաքուր օդը գլխաւորապէս պայմաններից մէկն է, որովհետև ամենից յաճախ այդ ախտը իշխում է կեղտոտ և հեղձուցիչ մթնոլորտով ախտներում: Հիւանդ ձիի պայտերը պէտք է հեռացնել. ախտում փոփոխութիւնը և մաքուր խոտ կամ յարդ, որովհետև հիւանդը միշտ տրամադիր է պարկելու: Ախտում պէտք է անպայման տաք լինի. անհրաժեշտ է տալ հիւանդին ընտիր սնունդ (գարի, արօտ և այլն) և մաքուր յստակ ջուր: Օգտակար է ջրի հետ տալ նաև փոքրիկ քանակութեամբ աղային թթւոււտ (соляная кислота, 1 մեծ գդալ մի վէդրօ ջրին):

Չիու բժաւոր ախտը Ռուսաստանում համեմատաբար շատ քիչ է տարածւած և երկրի տնտեսական բարօրութեան ու անասնապահութեան շահերի տեսակէտից բռնում է երկրորդական տեղ:

Աւելի յաճախ այդ ախտով հիւանդանում են չափահաս և պառաւ ձիերը ու սակաւ մտտազհասները (մինչև 2 տարեկան): Կան բժշկելու համար շիճուկներ (сыворотки), սակայն չափազանց թանգ են և ոչ էլ այնքան օգտակար:

606-ով բժշկելու փորձերը դրական հետևանքի չը հասան:

8.

Փ Ա Ղ Ի Կ

(Оспа. Variola)

Ծաղիկ կոչւած վարակիչ հիւանդութիւնը տարածւած է համարեա ամեն տեսակի ընտանի կենդանիների մէջ և համեմատաբար շատ թեթև ընթացք ունի:

Ինչպէս յայտնի է ընթերցողին ևս, ծաղիկը վարակիչ հիւանդութիւն է և նրա բնորոշ նշանն են կաղմում մարմնի վրայ երևան եկող կարմիր բծերը, որ ժամանակի ընթացքում դարգանալով ու կերպարանափոխելով դառնում են փոքրիկ հանգոյցներ (узелки) և ապա՝ բշտիկներ (пузырьки). առողջանալուց յետոյ այդ բշտիկները անյետանում են, սակայն մնում են բնորոշ հետքեր, փոսիկներ:

Ծաղիկը սկսում է ջերմով:

Իւրաքանչիւր կենդանի ունի իր համար բնորոշ տեսակի ծաղիկ. սակայն բժշկականութեան ասպարիզում գործող զիտնականներից ոմանք պնդում են՝ որ միայն մարդը, ոչխարը և թռչունները ինքնաբերաբար հիւանդանում են ծաղիկով, իսկ բոլոր միւս տեսակի կենդանիները վարակւում են նրանցից:

Ծաղիկ առաջադնող գրգիռը, հիւանդութեան անմիջական պատճառը, մինչև այսօր գտնւած, ուսումնասիրւած չէ:

Բժշկականութիւնը ճանաչում է՝ իսկական ծաղիկ, երբ բըշտիկները շրջապատւած են լինում շատ բնորոշ կարմիր և կլոր մատանանման շրջանակով, որի մէջ տեղում գտնւում է այսպէս կոչւած պօրտը (пупок). կեղծ ծաղիկը, որ պատահում է լուկ կովի ու մասամբ ոչխարի մօտ, բնորոշւում է կարմիր, կարծր և կոնաձև հանգոյցներով, որոնք ժամանակի ընթացքում սկսում են նեխւել: Այս կեղծ ծաղիկը վարակիչ չէ: Կայ նաև քամոս ծաղիկ (вбтряная оспа), բնորոշւում է նրանով, որ բշտիկների մէջ գտնւում են գաղեր:

Ինչպէս ասացիս համարեա բոլոր տեսակի ընտանի կենդա-

նիները տրամադիր են ծաղիկով հիւանդանալու. ասեմ մի քանի խօսք բոլորի մասին առանձին:

1. Կովի ծաղիկ (Variola vaccina)—գլխաւորապէս կենտրոնանում է կուրծի (ստինքի) վերայ և շատ թեթև կերպով անցնում, բժեք երևալուց մի քանի օր յետոյ նրանք արդէն դառնում են բնորոշ հանգոյցներ, սրանք ևս շուտով կերպարանափոխւում փոքրիկ բշտիկների՝ լի ջրանման հեղուկով: Վարակելուն նպատում են գլխաւորապէս՝ հիւանդ կովի կաթը և գոմի այլ իրեղեններ:

2. Այծի ծաղիկ (Variola caprina)—լիովին համապատասխան վերև նկարագրածս կովի ծաղիկին և նոյնքան էլ թեթև կերպարանք ունի. պատահում է շատ սակաւ:

3. Չիտ ծաղիկ (Variola equina) ձին ևս շատ սակաւ հիւանդանում է ծաղիկով, նոյն իսկ աւելի սակաւ, քան այծը և շուտով լիովին տողջանում:

4. Ոչխարի ծաղիկ (Variola ovina). բոլոր գոյութիւն ունեցող ձևի ու տեսակի ծաղիկներից սա ամենածանր ու ամենալուրջն է: Մանաւանդ ծանր կերպարանք է ընդունում նա, եթէ հիւանդը գտնւում է հակաառողջապահական պայմաններում. այդ դէպքում առաջ են գալիս մի շարք բարդ երևոյթներ, հիւանդութիւնը կարող է նոյնիսկ մի քանի ներքին գործարաններ զբաւել. այդ է պատճառը, որ ոչխարների ծաղիկը բաւականին յաճախ վերջանում է մահւան դէպքերով. 100 հիւանդից սատկում են մօտաւորապէս 10-ից մինչև 40—50 հատ թւերի այդ մեծ տարբերութիւնը կախումն ունի եղանակից և մասամբ հիւանդի կեանքի, կենցաղի պայմաններից:

5. Խոզի և շան ծաղիկ (Variola suilla et canina)-սրանք ևս նոյնպէս ծանր են և յաճախ մահացու, սակայն, բարբախտաբար սակաւ են հիւանդանում:

6. Թռչունի ծաղիկ (Տես «Թռչունների ախտեր» գլուխը): Ինչ վերաբերում է ծաղկի բժշկիւնն, անկասկած ամենալաւ և ուղիղ միջոցն է պատաստելը. բոլոր տեսակի ծաղիկները, բացի ոչխարի իսկական ծաղկից, այնչափ թեթև ու կարելի է ասել աննշան հիւանդութիւններ են, որ նրանց կարելի է ոչ միայն թողնել առանց բժշկութեան, այլ և չը պատւաստել այդ կենդանիներին: Այն ինչ ոչխարի ծաղիկը, ինչպէս ասացի, յաճախ ընդունում է շատ ծանր ու լուրջ կերպարանք. այդ է պատ-

ճառը, որ անասնաբուժութիւնը պահանջում է ոչխարներին պատուաստել:

Այս տեսակի ծաղիկը կարօտ է նաև բժշկութեան. բացի մաքրութիւնից և մի շարք առողջապահական պայմաններից, անհրաժեշտ է բժշկել վարակած տեղերը. հանգոյցները ու բըրշտիկները անհրաժեշտ է օրական մի քանի անգամ լանալ այսպէս կոչւած լիզօլեան ջրով (лизоловая вода) և ապա ծածկել ցինկի կամ կապարի և կամ իօդօֆօրմի սպեղանիով (цинковая, свинцовая или йодоформенная мази 1 : 10): Չափազանց ծանր կերպով հիւանդ ոչխարները սաստիկ վարակիչ են, ուստի առաջարկուում է այդպիսիներին սպանել և թաղել՝ առանց օգտուելու նրա մորթով կամ բրդով:

Բոլոր միւս տեսակի ծաղիկները պահանջում են լոկ մաքրութիւն և առողջապահական պայմաններ:

9.

ԽՈՋԵՐԻ ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացի մի շարք ընդհանուր վարակիչ ախտորից, որոնցով յաճախ կամ սակաւ հիւանդանում են նաև խոզերը, կան մի քանի ծանր ու լուրջ վարակիչ ախտեր, որոնք բնորոշ են բացառապէս խոզերի համար ու յաճախ պատճառ են դառնում չափազանց ծանր ու ֆլասակար համաճարակների: Այդ հիւանդութիւնները շատ տարածւած են ոչ միայն Ռուսաստանում, այլ և եւրոպական երկրներում և մանաւանդ խոզաբուծութեամբ յայտնի և հարուստ Գերմանիայում, ուր նրանք յաճախ ահազին ֆլասներ են հասցնում երկրի անտեսութեանը: Խոզերի այդ առանձնայատուկ վարակիչ ախտերն են.

1. Խոզերի կարմրուկը:
2. Թոքերի տարափոխիկ բորբոքում կամ արիւնախտ
3. Աղիքների " " " կամ ժանդախտ

Ա. ԽՈՋԵՐԻ ԿԱՐՄՐՈՒԿԸ

(Краснуха или рожа свиней, Erysipelas suum)

Սա չափազանց ծանր հիւանդութիւն է, որ առաջ է գալիս առանձնայատուկ միկրօբի գործունէութիւնից, Համաճարակները մանաւանդ սաստիկ են ամառը. սատկողների թիւը յաճախ հասնում է 100-ից 90 ի:

Հիւանդութիւնը բաժանուում է երեք ձևի՝ 1. շանրանար, երբ հիւանդը սատկում է 12—24 ժամայ ընթացքում, 2, սուր և 3. երկարատեւ: Հիւանդութեան բնորոշ նշաններն են՝ տաքութիւնը մինչև 42 աստիճան, ախորժակի կատարեալ բացակայութիւն, ծանր և դժւարին շնչառութիւն, հիւանդութեան սկզբին փորկապութիւնը, իսկ յետոյ փորլուծութիւն, բոլոր սեռաների լորձաթաղանթները կապոյտ գոյն են ստանում (ціанозъ), կաշի վրայ կարմրակապոյտ և յաճախ մուգ գոյնի բնորոշ բծեր, ծնոտի տակ և ականջների մօտ դտնւած գեղձերը ուռչում են, երևան է գալիս մարմնի յետևի մասի կաթւածահարութիւն (параличъ):

Երկարատեւ ման գալու դէպքում նկատուում է նաև հիւանդի սաստիկ լղարելը, բացի դրանցից, հիւանդանում են նաև ոտների յօդերը և խոզը սկսւում է կաղալ:

Այս բոլոր բնորոշ նշանները այնքան էլ առանձնայատուկ չեն, ուստի միայն նրանց վրայ հիմնելով յաճախ անհնարին է դառնում ջոկել այս ախտը խոզի ուրիշ վարակիչ ու ծանր ախտերից. այդ դէպքում բժիշկը պէտք է դիմէ նախ, միկրօսօպի և ապա՝ ներքին անդամների ու գործարանների ուսումնասիրութեան միջոցին:

Կայ նաև կարմրուկի լոկ կաշի մեւր, երբ բացի վերոյիշեալ բնորոշ երևոյթներից, գլխաւորը բծերն են. այս ձևը համեմատաբար աւելի թեթեւ է և յաճախ վերջանում է առողջանալով. սակայն նա իւր հետևանքներով փչացնում է անասնի արտաքինը. կարմիր բծերը առողջանալուց յետոյ ևս մնում են ականջի և պոչի վրայ ու, առաջ բերելով նրանց հիւանդութիւնը, նպաստում նրանց ընկնելուն, թափւելուն:

Խոզերի կարմրուկը չափազանց վարակիչ ախտ է. առողջ

կենդանիները վարակուած են սնունդի միջոցով, կարմրուկի ամենաբնորոշ նշաններից մէկն է՝ մարսողութեան ծանր խանգարումը, սաստիկ փորկապը յանկարծ դառնում է անզուսպ փորլուծութիւն, որ յաճախ մայասիլի կերպարանք է ստանում:

Չնայած մի շարք բնորոշ նշանների, խոզերի կարմրուկը կարելի է խառնել խոզերի միւս վարակիչ ախտերի հետ, որոնց մասին պէտք է դեռ խօսեմ: Խոզերի արիւնախտ ասած հիւանդութիւնից կարմրուկը տարբերուած է նրանով, որ այնտեղ գըլխաւորապէս թոքերի բորբոքումն է տեղի ունեցողը, իսկ այստեղ թոքերը անվնաս են: Խոզերի ժանդախտը բնորոշուած է աղիքների ծանր բորբոքումով, աւելի երկար է տևում և աւելի յաճախ վարակում անչափահաս կենդանիներին: Արևի հարածից (СОЛНЕЧНЫЙ УДАРЪ) կարմրուկը տարբերուած է ստամոքսի խանգարումով, բարձր ջերմութեամբ և երկարատևութեամբ (առաջինը սպանում է մի-քանի ժամայ ընթացքում):

Կարմրուկը չափազանց սուր կերպարանք և արագ ընթացք ունի. նա կարող է սպանել կենդանուն $1\frac{1}{2}$ — $1\frac{1}{2}$ օրւայ ընթացքում և սակաւ տևում է 3—4 օր, եթէ աւելի երկարատև է, յոյս կայ առողջանալու:

Հիւանդացած խոզերին պէտք է իսկոյն շնկել, դատել առողջ ներից և ամենախիստ կերպով պահպանել առողջապահական պայմանները: Օդտակար է հիւանդին երբեմն լւանալ մաքուր, պոյ ջրով կամ ծածկել թաց լաթերով: Պէտք է մաքրել ստամոքսը, տալով փորլուծողական դեղեր (каломель 2,0—4,0 օրը երկու անգամ):

Խոզերին կարմրուկից պահպանելու նպատակով դործածուած են պատւաստներ:

Բ. ԱՐԻԻՆԱՆՏ ԿԱՄ ԹՈՔԵՐԻ ՏԱՐԱՓՈՒՆԻԿ ԲՈՐԲՈՔՈՒՄ

(Септицемия или повальная пневмония свиней. Pneumonia contagiosa suum)

Շատ տարածւած է և չափազանց վարակիչ: Յայտնի է ամենահին ժամանակներից, սակայն առաջ խառնում էին կարմրուկի և ժանդախտի հետ, որովհետև երեքն էլ բնորոշուած են կարճա-կապոյտ բծերով. կարմրուկից տարբերուած է նրանով, որ

այստեղ կաշին, բացի բծերով ծածկելուց, բորբոքուած է և ուռչում, ապա՝ այստեղ գլխաւորը թոքերի ծանր բորբոքումն է, որը կարմրուկի ժամանակ չկայ: Ժանդախտից կարելի է տարբերել միայն շնորհիւ միկրոսկոպի օգնութեանը:

Այս հիւանդութեան բնորոշ նշաններն են՝ շատ սուր ընթացքի դէպքում—ջերմութիւնը բարձր է (մինչև 42°), հիւանդը չի վեր կենում տեղից և աշխատում է խրել գետնի մէջ, բացայայտ կերպով երևան են գալիս բծերը, շարունակուած է ամենաշատը մի օր և վերջանում անպայման մահաւամբ: Յաճախ հիւանդութիւնը ընդունում է աւելի թեթև կերպարանք և շարունակուած է 6—12 օր. ջերմութիւնը հիւանդութեան ամբողջ ընթացքում համարում է 40—41 աստիճանի. հիւանդը անդադար պառկած է, չի խմում քնաւ, թոքերի բորբոքումից առաջ է գալիս ծանր հագ, խոզը լղարում է, երբեմն խանգարում է և ստամոքսը: Այս դէպքում 100-ից առողջանում են ամենաշատը 20—25, որոնք երբեմն այս հիւանդութիւնը ընդունում է երկարատև, քրօնիկական ընթացք և շարունակուած է յաճախ $1\frac{1}{2}$ —2 ամիս. հիւանդը թոլանում է, սաստիկ լղարում, երբեմն էլ նկատուած է փորլուծութիւն:

Խոզերի թոքերի տարափոխիկ բորբոքումը համարեա անհնարին է դեղերով բժշկելը, մանաւանդ սուր կերպարանք բտանալու դէպքերում: Կարելի է ի հարկէ տալ հիւանդին այլ և այլ մաքրիչ միջոցներ, սակայն այդ բոլորի ազդեցութիւնը հազիւ տայ քիչ-շատ դրական հետեանքներ:

Այդ ծանր և չափազանց վարակիչ ախտի դէմ կաշելի է կուել լոկ պահպանողական միջոցներով, այսինքն, պատւաստելով ու զանազան շիճուկներով:

Գ. ԽՈՂԻ ԺԱՆՏԱՆՏ

(Чума свиней. Pestis suum)

Այս սաստիկ վարակիչ և ծանր հիւանդութիւնը, որ բաւականին մեծ չափերով տարածւած է նաև Ռուսաստանում, այլ կերպ կոչուած է աղիքների տարափոխիկ բորբոքում (повальный энтеритъ): Հիւանդանում են գլխաւորապէս անչափահաս խոզերը

Ա. ԹԹՁՈՒՆՆԵՐԻ ԿՍՄ ՀԱԻՒ ՔՕԼԵՐ

(Куриная или птичья холера. Cholera gallinarum)

Չափազանց տարածւած, ծանր և վարակիչ ախտ է հաւերի բոլորը: Հիւանդութիւն առաջացնողը դարձեալ միկրօք է (bacil avisenticus). նա գտնուում է նաև առողջ թռչունների աղիքներում, ու համապատասխան պայմանների է սպասում իւր գործունէութիւնը սկսելու համար: Բացի հաւերից այդ ախտով վարակուում են նաև փոքրիկ թռչունները (աղաւնի և այլն): Երբեմն հիւանդութիւնը ընդունում է չափազանց արագ ընթացք և յանկարծ, վայրկենապէս սպանում արտաքուստ կարծես լիովին առողջ հաւերին: Սակայն, աւելի թեթև դէպքերում ևս հիւանդութիւնը տևում է ամենաշատը 1½—2 օր: Հիւանդութեան բնորոշ նշաններն են փետուրները ցրիւ են արւած, սանրը կապոյտ գոյնի, երբեմն նկատուում է նաև թուրքի հոտուածը կտուցից: Հիւանդ հաւը միշտ նստած է, ընկճւած դրութեան մէջ, մի քանի ժամանակից ըսկսում է կտուցից հոսել մի ինչ որ դեղնաւուն, կեղտոտ հեղուկ. ամենազլխաւոր նշանն է՝ սաստիկ, անզուսպ փորլուծութիւն. յետևի փետուրները միշտ կեխտուում են և իրարու կպած՝ արիւնախառն արտադրութիւնների շնորհիւ: Ախորժակը բացակայում, երբեմն կատուում է անյագում ծարաւ: Հիւանդը սաստիկ թուլանում է և արագ լղարում: Տաքութիւնը հասնում է յաճախ 43, 5 աստիճանի:

Շատ սակաւ (զլխաւորապէս պառաւ հաւերը) հիւանդանում են երկարատև ընթացքով. այդ դէպքում ամենաբնորոշ երևոյթն է՝ յօդերի ուռեցելը. փորլուծութիւնը երբեմն փոխանակուում է փորկապութեամբ: Այդպէս կարող է շարունակել մինչև 3 շաբաթ և այդօրինակ հիւանդները չափազանց վնասակար են վարակելու տեսակէտից:

Հաւերի բոլորը յաճախ կարելի է խոնհել այլ մի քանի հիւանդութիւնների հետ (հլուծախտ, ժանդախտ, աղիքների բորբոքում). անհրաժեշտ է կասկածի դէպքում դիմել միկրօսկոպի օգնութեանը:

Բացի հաւերից, այս հիւանդութեամբ վարակուում են սաղը, բաղը, հնդկահաւը:

Ինչպէս բժշկել: Սուր և ծանր դէպքերում բժշկական միջոցները համարեա միշտ ապարդիւն են անցնում: Աւելի թեթև և երկարատև դէպքերում առաջարկում են տալ հետևեալ դեղերը՝ I. քաննին (танны на) կամ ղիբ (квасцы) ջրի հետ միասին. 2 երկաթի ծմբաքրոստի ջուր (ferrum sulfuricum 30, 0, aqua destill. 3006, 0). սա կարելի է գործածել ջուրի փոխարէն. առհասարակ առաջարկում են գարնանը թռչուններին ջրի փոխարէն տալ այս խառնուրդը: 3. Աղային քրոստի ջուր (Acidi hydrochl. crud. 30, aqua destil 3000, 0), գործածել, ինչպէս և նախկինը. շատ ընդունւած է Ռուսաստանում: Կան և բժշկական շիւկին (сыворотка „галлосеринъ“), բայց և՛ թանկ են, և՛ ոչ էլ այնքան ազդեցիկ:

Հիւանդներին անհրաժեշտ է իսկույն և եթ ջրկել, դատել միւսներից, թռչնատները մաքրել. առհասարակ աշաւուրջ ուշադրութեամբ կատարել առողջապահական բոլոր կանոնները ու պահանջները:

Բ. ԹԹՁՈՒՆՆԵՐԻ ԴԻՓՏԵՐԻՏ

(Дифтеритъ птицъ. Diphtheria ariums)

Համարեա ամեն տեսակի ընտանի թռչունները կարող են վարակել այս ծանր ախտով, որը սակայն երբեմն անցնում է հաւերին, թէև անանձին, բացառիկ դէպք, առանց վարակելու միւսներին և առանց համաճարակ առաջ բերելու: Հիւանդութիւնը տևում է բաւականին երկար ժամանակ և սպանում 100-ից մօտ 50—60 թռչուն: Հիւանդութեան արտաքին բնորոշ նշաններն են, լորձաթաղանթների վրայ նկատուում են դեղնագոյն, ձեղտոքեամբ փետուղ, փարսխներ (плешки): Ցաճախ հիւանդութիւնը զլխաւորապէս կենդրոնանում է աչքի մէջ և լիովին փչացնում այն, դարձնելով լըմբանման, կակողը զանգւած:

Հիւանդացած թռչուններին անյապաղ դատել առողջներից: Դիֆտերիտը շատ դժւար է բժշկուում և յաճախ, շատ յաճախ, անասաբոյժի բոլոր ջանքերը անցնում են իգուր:

Փարսխները անհրաժեշտ է փետուր և ստացւած վէրքերին քսել մաքրող դեղեր (ամենալաւն է սուլէմա 2 : 1000 լուծոյթը):

Փարախները կարելի է նաև այրել. օրինակ՝ պղնձի ծծմբաթու-
սուով (мѣдный купоросъ). օրական 1—2 անգամ: Աչքը անհրա-
ժեշտ է լվանալ բորաթթվուտի լուծույթով (2—3⁰/₀):

Սատկած թռչունները, ինչպէս և աղբը և այլն անհրաժեշտ
է այրել:

Խորհուրդ են տալիս նաև նոր թռչուն ձեռք բերելիս, 4—5
օր պահել նրան առանձին, մինչև որ լիովին չը հաստատուի ա-
ռողջ լինելը:

Գ. ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԾԱՂԻԿԸ

(Птичья оспа. Variola gallinarum)

Այս հիւանդութիւնը կայանում է նրանում, որ հիւանդ թռչ-
ունի մարմին ալ և ալ մասերի վրայ (սանր, ալանջ, փոր, ազ-
դըր, կոպեր և այլն) երևան են գալիս երբեմն փոքրիկ, իսկ եր-
բեմն բաւականին մեծ հանգոյցներ: Նոյնը կարող է նկատել
նաև լորձաթանթների վրայ և ոմանք այդ ախտը դժւարանում
են տարբերել դիֆտերիաից: Համեմատաբար այս հիւանդութիւնը
քիչ է տարածւած և շատ սակաւ կարող է պատճառ դառնալ քիչ-
շատ ակնյայտ համաճարակի:

Բժշկում են այսպէս. հանգոյցները (կաշւի վրայի) քերթում
կամ կտրում, միջի հեղուկը հեռացնում և վէրքերին քսում իօզ
(Creolini 5, Glycerini aquadis t. aa 100, O. M. D. S. այս դեղը
պործածւում է լորձաթաղանթներին քսելու համար):

Բացի այս երեք (և մանաւանդ առաջին երկու) ախտերից,
մեր ընտանի թռչունները չափազանց յաճախ հիւանդանում են
հիւժախտով, որը երբեմն ընդունում է համաճարակի կերպարանք:
Թռչունները հիւանդանում են գլխաւորապէս ալիքների հիւ-
ժախտով: Բժշկել անհնարին է, ուստի առողջապահական տեսա-
կէտից անհրաժեշտ է հիւանդին ոչնչացնել:


15 11 8



Վ Ե Ր Զ

Ց Ա Ն Կ

	Երես
Յառաջաբան	I
Սիրերախտ	1
Սապ	7
Դաբաղ	13
Եղջիւրաւոր անասունների ժանդախտը	17
Տուբերկուլիոզ	24
Թոքերի տարափոխիկ բորբոքում	34
Զիւռ թոքերի տարափոխիկ բորբոքում կամ ձիւռ	43
ժանտախտ	
Եղջիւրաւոր անասունների թոքերի տարափոխիկ բորբոքում	37
բորբոքում	
Զիւռ. արիւնա—բծաւոր ախտը	42
Ծաղիկ	44
Խոզերի հիւանդութիւններ	46
« կարմրուկը	47
Արիւնախտ կամ թոքերի տարափոխիկ բորբոքում	48
Խոզի խանդախտ	49
Ընտանի թռչունների վարակիչ ախտերը	51
Թռչունների կամ հաւի քօլեռ	52
» դիֆտերիա	53
» ծաղիկը	54



« Ազգային գրադարան



NL0289294

8558